Ը Ա Գ Ա Յ Ի Ն

ՅԱՄԱՀԱՏԻՄԱՍԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ·

№ 219

МОСКВА.
Типографія быв. А. В. Кудрявцевой, Мясницкая д. Сытова.
1882.

371(47.925)(09)
Ա 23

ԱԶԳԱՅԻՆ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

«Եւ եդի զի դուք երթայիցէք և պտղաբեր լինիցէք և պտուղն ձեր կացցէ։» Յովհ. ԺԵ. 16.

A 3961

Մեր Ազգի կրթութեան, զարգացման և յառաջադիմութեան համար կէս դարէ իվեր է, որ անխոնջ ջանք ու անհուն ծախքեր կը լինին, օրէնք, կանոն, հրահանգ և ծրագիր կը սահմանուին. ուղղութիւններ, դրութիւններ, կարծիքներ և խորհուրդներ կը հրատարակուին. վէճ, կռիւ, տարաձայնութիւն, զրպարտութիւն և դատեր կը լինին. հին ու նոր իմաստութեամբ և իմաստակութեամբ թերթեր կը լեցուին. ամէն ոք Ազգին օգուտն 'ի բերան՝ ուշածն ու գիտցածը կը խօսի և կը գրէ. ամէն մարդ յանուն ազգային յառաջադիմութեան զենուած՝ մի քար կարձակէ. բայց կարևոր տեղը կը հանդչէ՞ այն, թէ չէ՝ զանտեղով մի ուրիշ արդէն տեղը դրուած քարի, իրեն հետ զայն ալ կը գլորէ... և կը վնասէ ազգային յառաջադիմութեան արդէն խախտուա շէնքին.—Նա զայս տեսնել անգամ չը կամիր։

Կասեն թէ,—Ամեն մարդ ազատ է կարծիք յայտնելու։ Մենք տեսանք, որ յանուն ազգասիրութեան, յանուն կրօնի և եկեղեցւոյ, յանուն ճշմարտութեան շատ կարծիքներ յայտ-

ՀՈՍԻ ԳԱՌՆԻՆ ՄԱՏԵՆԱՏՈՒՆ
ՅԱՒԻՏ ԻՍՍԵՆՏԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

նուեցան. խիստ քիչերն իրենց ցոյց տուած սկզբան և նպատակին հաւատարիմ կեցան բանիւ և գործով, իսկ շատերն այդ հրապուրիչ անուններն իբր պատրուակ միայն գործածեցին իրենց թաքուն խորհրդոց և նպատակաց, որք չօգնեցին ազգին, զի յայտնած կարծիքներն ազգային չէր, այլ օտարօտի, օտոգ կրօնի աղբիւրէն չէր, այլ քմածին. ճշմարտութիւն չէր, այլ այս պատկառելի անունին տակ ծածկուած՝ ստութիւն, նենգութիւն, կեղծաւոր ու խաբեայ հնարքով ազգասաս մասնութիւն էր, որք չարաչար վնասեցին Ազգին ամեն տեսակ շահուց. բայց ոչ ոք չը կարողացաւ խափանել զանոնք կամ ունայնացնել. մենք և այդ մասին մեր տարութիւնը կը խոստովանինք։

Մենք՝ քաղաքակրթութիւն, լուսաւորութիւն և յառաջադիմութիւն գտնել կարծեցին հանդերձից փոփոխութեան մէջ. սակայն դժբա՛ք քաջալերեցին օտարին նմանելու մոլութիւնը, մոցուցին Ազգին մէջ շռայլութիւնը և լցուցին Ազգին ճոխութիւնը օտարի գոգը։ Փոխանակ արհեստաս ու հանճարը գիտութիւնն ու ճարտարութիւնը մշակելով Ազգին մէջ հնարիչ ու հեղինակ յառաջ բերելու, ստուկ օրինակողներ և օտարին շահուց յօժարակամ ծառաներ պատրաստեցին։

Այլ յառաջադիմութիւն համարեցին, առանց բարոյական կրթութեան, կանանց անպոյման ազատութիւնը և օտարաց հետ համարձակ անխիրտ յարաբերութիւնը. որով մոցուցին անհամեստութիւն, լրբութիւն, անամոթութիւն, այր ու կնոջ անհաւատարմութիւն։ Պառեցուցին ընտանեկան անոյշեկ սէրը, վերդովեցին նորա ցանկալի խաղաղութիւնը, դժուարացուցին և զրկեցին արին ամուսնութիւնը՝ եղեելով նորա բարոյականութեան հիմքն եղող սուրբ օրէնքները. գերդաստանի հարազատ կապութիւնը խանգարեցին և

այսպէս կանգնեցնելու խոստումով ձգեցին մարդն ու կինը բարոյական կեղտոտութեան մէջ... Այժմ կաշխատին այդպիսի...ները՝ կոյս մնացած սեղերու և գիւղերու սրբութիւնն ալ պղծել:

Որմնք վերցնելով ուսումնարանաց մէջէն ազգային հին գրական լեզուի ուսումը,[1]) մեծ յառաջադիմութիւն անել կարծեցին. բայց այդու օտարացուցին Ազգին որդիքը նախնեաց գրականութենէն, մոռացուցին նոցա ոգին, նոցա ազգային, ու բարոյական կեանքը. անծանօթ թողին բուն ազգայնութեան գաղտարարն, զոր նախնեաց գրականութիւնը ուսումնասիրելով կրստանային, զի նոցա պատմական, բարոյական և կրօնական երկասիրութեանց մէջ միայն կը գտնէին մեր ազգայնութեան կեանքը: Անարգելով Ազգին գրական հին լեզուն, անարգեցին իւրեանց ծագումն ու գոյութիւնը. սառեցնելով անտի, սառեցուցին եկեղեցիէն և զրկեցին նորա բարերար ազդեցութենէն:

---

[1]) Հարկ կը համարիմք ասել, որ մեք գրաբարն հասարակաց գործածական լեզու շինելու խորհողաց կարգէն չենք, զի գիտենք գորա անիրագործութիւնը, գիտենք, որ ոչ մի ժամանակ ալ այնպէս եղած չէ, այլ իբրև միութիւն պահող կանոնաւորուած լեզու՝ գրականութեան և պաշտօնական դիւանների մէջ գործածուած ու բոլոր տարածայն լեզուաց մէջ ամենուն հասկանալի միակ լեզուն եղած է. Մեք հաստատ համոզմամբ կը ճանչնամք գրաբարի ուսման կարևորութիւնը ազգային յառաջադիմութեան գործոյն մէջ, և կը ցանկամք, որ եթէ հնար է, Ազգին բոլոր անդամներն ընտելանային գրաբարին, ոչ թէ գործածելու համար, իբրև հասարակաց լեզու, այլ իբրև ազգին մեկ սեպհականութիւնը և նորա գրականութեան աղբիւրը և ներկայ գործածական աշխարհաբարի մայրը, սովորելու և հասկանալու համար: Այս կը յայտնի մանկութեան օրէն դիւրին ոճով և հնարքով հաշտեցնել նորա հետ սիրցնել և կամաց կամաց վարժեցնելով:

Ամենք, գիտութեամբ կամ յանդգնաս, օտարի շահուն ծառայելով Ազգութիւնը եկեղեցիէն բաժանեցին, հաւատացնելով թէ ազգութեան մեծ ծառայութիւն արին. սակայն իրօք անտարբերութիւնը ծաւալեցին, Ազգին բաժանման օգնեցին և օտարաց շահը մշակեցին, մինչդեռ քաջ գիտէին, որ մեր եկեղեցւոյ ոգին բոլորովին մարդասիրական է, չի ատեր ոչ մի ազգ և կրօն, քանի որ նոքա մեզ չեն ատեր ու զրպարտեր։ Այնպիսի դիպաց մէջ իսկ իւր վէճքը միայն պաշտպանողական է։ Մինչդեռ քաջ գիտէին, որ այսօր միայն Հայոց եկեղեցին մնացած է եղբայրասէր, նեղողախտ ոգւով և խղճի ազատութիւնը յարգող բայց երբ իրմէ բաժանեալներն կամ օտարը չարութեամբ զրպարտութեամբ և թշնամութեամբ կը մեռնեան իրեն, այն ատեն նա պարտաւորութիւն կզգայ պաշտպանել ճշմարտութիւնը. այս անելով թշնամութիւն արած չի լինիր։ Այս ամենը քաջ գիտալով կրօնքն ազգութենէն բաժան քարոզողք, ամեն հնար ու ճիգ կը թափեն Ազգայնութիւնը ջնջելու զոր Հայը միայն եկեղեցիովը ու իւր սեփական ազգային կրօնի դրութեամբն ունի, իսկ օտարին յարելով կոտարանայ և կը քայքայուի Ազգայնութիւնը...։

Շատ ուրիշներ ալ եկեղեցականաց պակասութիւնը հրապարակաւ խայտառակելով և շարունակ զանոնք ընդհանրապէս անուանարկելով կարծեցին թէ արդէն յառաջադիմութեան մէջ կը գտնուին. սակայն ներհակաբար, այդու Յառաջադիմութեան գործը դժուարացուցին. զի նորա կարևոր մշակներու ձեռքերը լքուցին. ընդհանրապէս կոտրելով հասարակութեան առջև նոցա պատիւը, անարգուեցան և սակաւաթիւ լաւերն էս. կորուսանելով պատշաճաւոր յարգանքն ու ակնածութիւնը, կորուսին և կարևոր ազդեցութիւնին և եղան ոչինչ. իսկ Ազգը կրեց, դեռ կը կրէ

և տակաւին պիտի կրէ այս անխոհեմութեան դառն հետևանքներն։

Ա. Երջապէս կարճ խօսքով, ամէն մարդ — լուսաւորութիւն, կրթութիւն և յառաջադիմութիւն՝ ասելով՝ հասկացաւ այն բանը, ինչ որ ինքն կը ցանկար, ինչպէս իւր կիրքն ու հանճարը թելադրեցին, ինչ որ օտարի ներգործութիւնը կամ մտաւոր մի նկատումն շարժեց իւր զգացումն ու խորհուրդը. ամէն ոք կարծեց կամ կարծեցնել ուզեց թէ իւր կարծիքն ու առաջարկութիւնքը պատշաճաւոր քարեր են ազգային յառաջադիմութեան մեծ ու կարևոր շէնքը բարձրացնելու. սակայն աւելի պատճառ դարձաւ շինուածը քանդելու, շինութիւնը խափանելու և ոչ ինչ չը շինելու. ճարտար շինողներն ալ, որ պակաս չէին, անգործութեան և յուսահատութեան մատնեցին։ Եհա այսպէս ուղղակի և անուղղակի օտարին գաղտնի, նենգաւոր և ազգակուլ նպատակին ծառայեցին. փոխանակ ազգին օգնելու, նորա թշնամեաց շահուն նպաստեցին։

Այս ամենը տեսնելով, և հաստատելով որ մեզ ևս շնորհուած է կարծիք յայտնելու ազատութիւնը, այս անգամ ևս գրել կը համարձակիմք մեր խորհածը սուրբ զգացմամբ, նպատակ ունենալով միայն բուն մեր Ազգին սեպհական յառաջադիմութիւնը և նորա օգտին ցանկանալով։ Դէ որպէս զի կարելի եղածին չափ համառօտ խօսելով նպատակս հասկանալի անել կարողանամ, կը բաժնեմ խօսքս իրարմէ կախումն ունեցող հինգ մասերու։

Ա.—Դպրոցականութեան լքեալ վիճակը։

Բ.—Դպրոցականութեան կոչումն ու պարտքը և սոցա զանցառութեան հետևանքը։

Գ.—Դասախօսակութեան համար մեր նախնեաց սահմանած կանոնը։

Գ.—Անիշխանութիւն։

Դ.—Իմ ներքին համոզումն ու հաւատքը։

Այս մասերու վերայ կը խօսիմք առ այժմ խիստ համառօտ, բայց նախ կը խնդրեմք խոնարհաբար ամէն ազնուցմէ, որ այսպիսի խնդրոց զգուշադրութեան պաշտօն և ձեռնհասութիւն ունին, որպէս զի շնորհք անեն ուշադրութիւն դարձնելով հոգ տանելու և չը թողուն, որ մինչ-ցարդ խօսուած ու գրուածներուն պէս, այս ևս անկատ և ապարդիւն անցնի ու կորչի մոռացութեան անդունդին մէջ։ Երկրորդ կարեկից սիրով կ'աղաչեմք և կը խնդրեմք ընդհանուր Հայ հասարակութիւնէն, որ մտադրութեամբ կարդալով մէր խօսքերը, գոնէ այսուհետև հոգ տանի բարեկարգութիւն իւր մէջէն սկսելու և նպաստէ ազգային յառաջադիմութեան։ Դէկոնցական և Աշխարհական, անդաք են Ազգին, ուստի և մի մարմին կը կազմեն, ուրեմն անհրաժեշտ հարկ է այդ մարմնոյ հիւանդ անդամները նախ բուժել, որ ամբողջ մարմինն առողջանայ ու կաղդուրուի։ Այս դարմանատրութեան մէջ պարտական են բոլոր անդամներն օգնութեան հասնելը Հիւանդ անդամն որչափ պիտանի է, այնչափ մեծ ու հիմնական խնամոց պէտք ունի։ Դէկոնցականութիւնը Ազգին ամենակարևոր անդամն մնալէն մին է, և սակայն նա վատագաւոր հիւանդ է. օգնութեան կարօտ է. խոշտանգելը հարուածել և անարգելը՝ չօգնելէ զատ, ցաւն աւելի կը սաստկացնէ. երբեմ ձգելը ոգուս չաներ, բժշկել պէտք է, բժշկելու պարմանները մեծագոյն մասը ժողովրդի ձեռքն է, գործադրել պէտք է.

Ե·

Եկեղեցականութեան լքեալ վիճակը

Եկեղեցականութիւնը ընկած է այսօր իւր բարձրութիւնէն և կորուսած է իւր վսեմ նշանակութիւնը, վասն զի լքեալ է ամէն կողմէն։ Եկեղեցականութեան անկեալ վիճակին վերայ երկար խօսելու պէտք չունինք· զի ոչոք կուրանայ զայս· ամէն բերան կը խոստովանի, ամէն մարդ այս մասին կը խօսի, կը ցաւի, կը դանդատի և բարեկարգութիւն կը պահանջէ, բայց լսող դարմանը խորհող և կանխնեցող չը կայ, վասն զի լքուած, երեսէ ձգուած է եկեղեցականութիւնը լքուած է ինքն իրմէն, լքուած է և ժողովուրդէն։

Ոչ մի դարու մէջ ընդհանուր եկեղեցականութեան վերայ այս չափ անարգանք և նախատինք թափուած չէ, որչափ մեր ժամանակը· սակայն և ոչ մի ժամանակ այնչափ զեղծումն չէ տեսնուած, որչափ կը տեսնուի այսօր ու գնալով կաւելնայ.—ինչո՞ւ.—վասն զի անդարման լքեալ թողուած է, ոչ եկեղեցականութիւնն ինքն զինքը կը դարմանէ և ոչ ժողովուրդը հոգ կը տանի։ Թէպէտ շատ անգամ հրապարակի մէջ ընդհանուրի և մասնաւորաց, ուղղակի և կողմնակի շատ խրատ ու յանդիմանութիւն տուին, անարգանք ու նախատինք տեղացին· իսկ առանձինն բովանդակ ժողովուրդն իւրեանց մէջ եկեղեցականութիւնը բամբասանաց առարկայ շինած· կը խօսին, և ասով ուշադրութիւն դարձուցած և դարմանել կարծած են, բայց ոչ, այդ իսկ երեսէ ձգած լինելուն նշանն է· զի այդ եղանակը

չօգնելէ պատ չարաչար վնասեց. զի կանգնեցնել չէ պդ, այլ կործանել զի հարուածող շատ, բայց ձեռք բռնող օգնող չը կայ. ուստի մնաց նա իւր անկման մէջ, ախտը ճարակեցաւ, մոլեներն համարձակութիւն գտան աներկիւղ շարունակելու իրենց մոլութիւնները և շատ հեռուներն ուռնեցան, իսկ սակաւաթիւ լաւերը կոտրած սրտով փշրած ազգեցութեամբ մի բան անել չը կարողանալով, քաշուեցան մի կողմ, ցաւելով ու ողբալով անցուցին իրենց օրերը. հետզհետէ նոքա պակսեցան և նոցա չը յաջողեցին լաւագոյնը, փախնալով իրենց պատիւէն: Համայն և այնպէս բնաւ մէկը փոյթ չը տարաւ խնդրել դարման անելու. այլ զրէ թէ ամէն ոք, թէ յանդեստս և թէ դիտութեամբ, գործեցին 'ի նպաստ եկեղեցականութեան անկման, որով հասաւ այս օրուան վերջին աստիճան տխուր ու սարսափելի վիճակին. անդարման լքեալ կը մնայ և օր ըստ օրէ խիստ ծանր ու փանգաւոր գործողութեան—անդամատուութեան—կը կարօտի...:

Եկեղեցականութեան անկման հետևանքն եղաւ ժողովրդեան սառնութիւնն ու ալհամարհանքը. սառելով եկեղեցականութիւնէ՝ սառեցաւ և եկեղեցիէն, կրօնքէն և ճշմարիտ բարոյականութենէն. եղաւ խաղալիկ իւր կրից և ամէն օտար փարդապետութեանից շարժող հողմերուն. իսկ ատի հետևեցաւ անկարգութիւն, անհնազանդութիւն, բաժանումն և փանգ ազգային ամբողջութեան, նորա կենսական շահուց և յառաջադիմութեան:

Շատերուն հետ մենք ալ եկեղեցականութեան պատուոյն նախանձախնդիր լինելով ամէն առթիւ իբրև ճշմարիտ բարեկամ թէ ուղղակի իրենց հետ խօսելով փանգն յայտնած և զգուշութիւն խնդրած ենք, թէ շատ անգամ հրատարակած ենք և թէ մանաւորապէս երբեմն բարձր-

ասպիճան եկեղեցական Հարց նամակաւ դիմած եմք, ցոյց տուած եմք վերքի վանդաւոր դրութիւնը և աղերսանօք խնդրած եմք դարմանը։ Բայց դժբաղդաբար այսօր ոչ մի խնդիր, ոչ մի այլ առաջարկ այնպէս անուշադիր չանցնիր, անգործադրելի չի մնար, որչափ եկեղեցականութիւնը բարեկարգելու խնդիրը. միշտ ապարդիւն մնացին ինչպէս շատերու պատուական խօսքերն ու խոհական խորհուրդները, նոյնպէս անսելի մնացին և մեր տկար խօսքերն ու սրտագին պաղատանքները։ Սակայն մեք և մեղ հետ շատերը այս խնդրոյն մէջ կը տեսնեմք ժողովրդեան անկումն ու կանգնումը. խանդարումն ու կազմութիւնը, մոլորութիւնն ու ուղղութիւնը, շփոթութիւնն ու բարեկարգութիւնը. ուրեմն և այս խնդիրը մեր ազգի յառաջադիմութեան համար կենաց և մահու խնդիր է։ Ոչ մի բան այնքան նախնական մնադրութեան և դարմանի սիպողականութիւն չունի, սչափ եկեղեցականութիւնը։ Այո՛, կը կրկնեմք, լքուած է եկեղեցականութիւնը, ուշադրութիւն կուզէ. պէտք է սթափիլ գոտիներ պնդել, ճրագներ վառել ջանալ տքնիլ, այս ցաւը փութապէս դարմանել. փոյթեռանդն հոգ ու խնամք պէտք է. ամեն զգուշութիւնք ձեռք առնելով հարկ է բուժել զայն. իւր կորուսած բնական առողջութեան դարձնել. պէտք է բարձրացնել այն տեղ, որ տեղէն գլորած անկեալ կը մնայ. պէտք չէ թողուլ անտես և լքեալ վիճակի մէջ։ Հիւանդն անդարման թողուլ կը նշանակէ ախտն յառաջացնել, ապականել հիւանդ անդամը. իսկ մէկ անդամի ապականութիւնը բոլորին ալ ապականութիւն և մահ կը պատճառէ։ Այս վտանգին մէջ է Ազգը գրէ թէ, այս վերջին վանդէն ազատելու համար գոնէ մի գործնական դարմանի ձեռնարկեցէք։ Հերիք խօսուեցաւ. մինչև ցարդ խօսուածներն բաւականէն աւելի

յայտնեցին վանդը և աւելի վանդեցին. խօսքը մարմնացուցէք, կոչեցէք այս սուրբ պաշտօնին գիտակից, պարտաճանաչ գործունեայ անձեր, որ կարողանան եկեղեցականութիւնը իւր նշանակութեան դարձնել։

Ռ.

Եկեղեցականութեան կոչումն ու պարտքը։ Սուցա զանցառութեան հետևանքը։

Մեծ է եկեղեցականութեան կոչումը, մեծ է և նորա պարտքը. ինչ որ է մարմնոյ մէջ հոգին, այն է և ժողովրդեան մէջ եկեղեցականը, ինչ արամագրութեան մէջ գանուի հոգին, այնպէս կը գործէ մարմինը, ինչ աստիճան բարոյական արժանեաց մէջ է եկեղեցականութիւնը, այնպէս կը զարգանայ և ժողովուրդը. վստահութեան արժանի կարող ու ազդեցութիւն ունեցող մի եկեղեցականի քիչ ժամանակի մէջ ստաջ, չեն կարող շատ աշխարհականք երկար ժամանակի մէջ յաջողցնել նոյնպէս և հակադարձը, մի վնասակար անարժան եկեղեցականի առերաջը չեն կարող շատ մարդիկ ուղղել երկար ժամանակուան փորձը զայս ապացուցած է։ Բայց մի գլխաւոր նկատելու արժանի հարց կայ, որուն մեծ ուշադրութիւն դարձնել պէտք է։— Մեր եկեղեցականութիւնը ժողովրդէն յառաջ կուգայ, որոշ ցեղապետութիւն կամ ժառանգական սեպհականութիւն չէ, առանձին մարմին կամ խումբ չի կազմեր, այլ բոլորովին ժողովրդական է. ասոր մի դժուարութիւն կը ծագի

գիտնալ թէ, արդեօք նախ ժողովուրդը պատրաստուած պէտք է լինի, որ եկեղեցական տայ, թէ եկեղեցական պատրաստելու է, որ ժողովուրդը կազմէ և բարեկարգէ։— Մէք զայդ վերջը կը պարզենք։

Եկեղեցականութիւնը Աստուծոյ պաշտօնէութիւն է, նոյա կոչումն է անձնուէր յօժարակամ ինքնազոհութեամբ աշխատել ժողովրդեան մտաւոր և բարոյական զարգացման. ծառայել մարդուն ազատագոյն մասին, անմահ հոգւոյն. կազմել պատրաստել Աստուծոյ որդիներ և ընծայել Աստուծոյ։—Մե՞ծ գործ. վա՜ մ կոչումն։—

Քրիստոսի Տեառն մերոյ բազմաթիւ պատուէրներէն ու օրինակներէն զատ, այս խօսքը, թէ. „Ես եդի զձեզ զի դուք երթայցեք և պտղաբեր լինիցիք և պտուղն ձեր կացցէ“, միայն այս խօսքը բաւական է եկեղեցականին ցոյց տալ իւր կոչումը և գծել նորա պարտականութիւնը։—Ես, արարածոց Տէրս,— եդի զձեզ որոշեցի, կոչեցի և հաստատեցի մի գործի, մի պաշտօնի վերայ.—որ դուք, պաշտօնեայքդ գործաւորքդ.—երթայք, արի արթուն և ժիր աշխատիք, գործէք անխոնջ՝ այս պաշտօնի պահանջման համեմատ, և—պտղաբեր լինիք, արդիւնք տայք, ինչպիսին ես կը պահանջեմ ինչ որ ինձ արժանաւոր է և ինչ պտուղ որ ես կը սիրեմ և կախորժիմ։—և ձեր պըտուղը մնայ, չը փճանայ, տևէ, մշանջենաւոր լինի, յաւիտեան պահուի։

Ահա այս խօսքերէն կը հասկացուի պարզ, որ նախ, եկեղեցականութիւնը մի պաշտօնէութիւն է, ուրեմն պարտաւոր է իւր այս պաշտօնի նշանակութիւնն ու պահանջմունքները սովրի, գիտնայ և ապա իւր պաշտօնի գլուխն անցնի։ Երկրորդ, կը հասկացուի, որ զինքն հաստատող Տէր մի կայ, ուրկէ նա կախումն ունի և նմա հաշիւ պի-

սի տայ. ուրեմն հարկ է այդ Տիրոջ կամքն ու յօժարութիւնը գիտնալ. հպատակել նորա կամաց և հրամանաց գիտակցաբար և յօժարութեամբ։ Երրորդ, գործել աշխատել հաստատուն պտուղներ բերելու համար, անդադար ջանք չը խնայել առանց որ և է նիւթական ակնկալութեան. այլ միայն իւր ընդունած պաշտօնը հաւատարմութեամբ կատարել ամենայն զգոհաբերութեամբ, իրեն աւանդուածն անկորուստ և անաղարտ պահել, օտարաձայն և սուտանուն ուսումներով ու վարդապետութեամբ չը դանդաղել և չը գայթակղել, զինքը գնող, հաստատող տիրոջ միայն հաճելի լինել. իսկ տիրոջ կամքն է, որ մարդիկ բարի ու կատարեալ լինին, ինչպէս ինքը կատարեալ է։ Ուրեմն կոչուած է եկեղեցականութիւնը յանուն յաւիտենականին հրաւիրել և պատրաստել զմարդիկ 'ի բարութիւն և 'ի կատարելութիւն, միացնել միակ բարւոյն և կատարեալին հետ. Նուիրել Աստուծոյ՝ ինչպէս մի հաճոյական և ցանկալի պտուղ, այս չա՛ փ մեծ է ահա եկեղեցականութեան կոչումը, վասնզի մեծ է և նորա կոչողը։

Այս կոչման վերայ խորհելով՝ մեր կը դանենք իսկոյն և նորա պարականութիւնը, որք են. Նախ, Հմտութիւն սուրբ գրոց. ուր պիտի սովրի Աստուծոյ կամքը և լուսաւոր ու հեզ հաւատքով միացնէ իրեն կամքը նորա հետ։ Գիտութիւն կարգաց, կանոնաց և օրինաց եկեղեցւոյ, որով պիտի կառավարէ ժողովուրդը և պահէ կարգ, միութիւն և ուղղութիւն ամեն բանի մէջ։ Երկրորդ, պարտաւոր է լինել ժուժկալ, առկուն, աշխատասէր, սուրբ, ամեն առաքինութեամբ զարդարուած և երկար փորձառութեամբ ունակացած, որ կարողանայ միշտ գործել, առնչառ խօսել և բարի օրինակ դառնալ ժողովրդեան։ Երրորդ. Ճշմարիտ վկայութիւն ունենալու է թէ իւր

խղճէն և թէ ժողովուրդին, որպէս զի ազդել և ուղղել կարողանայ։ Ազորդ, պէտք է լինի անշահասէր, արդար և կատարեալ ճշմարտախօս, որպէս զի վստահութիւն և հաւատք ներշնչէ ժողովրդեան։ Հնդերորդ, քաղցրութեամբ դիւրընդել և համեստ ծանրութեամբ պատկառելի պէտք է լինի, որ տկարութիւնները տեսնել, խմանալ, դարմանել զօրացնել և հաստատել կարողանայ։ Վեցերորդ, հեզ, համբերող և դասախարակութեան ոգի ունենալու է, որ ժողովուրդը կրթէ և նոցա որպէսց ուսման և ուղիղ դասախարակութեան հոգ տանի, մնաւոր զարգացմամբ ատիճանաբար բարձրացնելով զանոնք՝ ընդունակ առնէ այլ և այլ ուսանոց, յարմարացնէ զանոնք իրենց նախախնամական վիճակին և կոչման, պիտանի և օգտակար անդամ շինէ մարդկային ընկերութեան։

Իսկ այն եկեղեցականները, որք առանձնակեաց ամուրի վիճակը ընտրած են, իրաւունք չունին քաղաքի, գիւղի կամ ընտանեաց մէջ բնակութիւն հաստատել։ արգելուած է նոցա համար ամէն անձնական սեպհականութիւն, ինչ. կալուածք և որևիցէ մի բան, որ կարող է արգելք դառնալ իւրեանց պաշտօնը, պարտքը կատարելու։ Նոքա պէտք է մի յատուկ կեդրոնի կամ միաբանութեան պատկանին, որ մատակարարէ նոցա կենսական պէտքը և անօրինէ նոցա գործքերին ու պաշտօնները. նոքա այնտեղ առանձնացած՝ միշտ մարդկութեան բարին նպատակ ունենալով պարապելու են մնաւոր և հոգեշահ զբաղմունքներով, իւրանց մեծաւորին հնազանդ, նորա հրամանաւ պէտք է տեղափոխեալ ժամանակներու մէջ շրջին քաղաքէ քաղաք, գիւղէ գիւղ քարոզեն, խրատեն, յորդորեն և ուղղեն, հսկեն եկեղեցւոյ բարեկարգութեան և պաշտամանց նոյնութեան վրայ, մէկ տեղի մէջ տարիներ չանցնեն. 'ի պահանջել հարկին վեց

ամիսէն մինչև մէկ տարի միայն կարող են մնալ, միշտ շըրջին, ուսումնարանաց յառաջադիմութեան վիճակը և յետադիմութեան պատճառները քննեն, զեղծումները հերքեն, ուղղութիւն տան, և ժողովրդեան քրիստոնէական կեանքին, վարուց և բարուց վերայ մտադրութիւն դարձնելով երեցներուն հրահանգներ տան, քաջալերեն, զօրացնեն, հսկողութիւն և օրինապահութիւն պատուիրեն, առանց որև է մի քաղաքական գործի խառնուելու. իւրանց պաշտօնը անթերի կատարելով որոշեալ ժամանակին դառնան իւրեանց կեդրոնը, միշտ ու կատարեալ տեղեկութիւն տան, որպէս զի կարևոր անօրէնութիւներ լինին և միւս անգամի համար հրահանգներ պատրաստուին։ Իսկ այն տեղ ևս պարապին յատուկ որոշեալ աշխատութեամբ։ Իրաւունք չունին եկեղեցականք (թէ ամուսնացեալ և թէ ամուրի) առանց իրենց մեծաւորի հրամանին տեղէ տեղ փոփոխիլ. գնացած տեղերնին (վիճակ կամ միաբանութիւն) զինքն ապստամբ նկատելով պէտք չէ ընդունին, այլ հարկ է աշխատին իւրեանց տեղը վերադարձնել. մէկ տեղ յանցաւոր դատուածը, մի ուրիշը պէտք չէ արդարացնէ. ապա թէ ոչ հակառակ դէպքի մէջ ընդունողը և արդարացնողը յանդիմանութեան և պատասխանատուութեան ենթարկին. չարեաց և անկարգութեանց պատճառ ինքնանք կը նկատուին. վանդի ապստամբութիւնը, օրինազանցութիւնը, դասարկաշրջիկութիւնը և ամեն տեսակ մոլութիւնը խստապէս իրենք քաջալերած կը լինին։

Այս է եկեղեցականաց կոչման և պարտուց խիստ համառօտ ծրագիրը, զոր Սուրբ գիրք և եկեղեցին սահմանած են, որում մեր նախնիք կը հետևէին երկիւղած ջերմեռանդութեամբ, որոց ջանից և աշխատութեան մնացորդ արդիւնքն է, որ դեռ կը փայլիմք, և սակայն շարունա-

կութիւնն ընդհատած լինելով հետզհետէ այն եւս սպառելու վրայ է։

Այս սուրբ և փեմ կոչման անդիտակից եկեղեցականաց պարտաղանցութենէն և օրէնքի անհնազանդ գտնուելէն յառաջ եկած մեծամեծ ու բազմաթիւ վնասներն հիմ կարող է թուել. ահա ներկայ մեր անանխանձելի դրութիւնն ու վիճակը հետևանք է այս զանցառութեանց։ Ահա կը տեսնեմք, որ օրէ ցօր կը բազմանան այս պաշտօնին տգէտ, ինքնահաւան, մոլի եկեղեցականք, սրբեցող, դասարկաշրջիկ, շաղակրատ, խեղկատակ, անկրօն, անտարբեր և աշխարհամոլ ագահ կրօնաւորք. ժողովուրդը կը գայթակղի 'ի հաւատս և 'ի վարս. եկեղեցականութիւնը կանարգուի և կարհամարհուի, ըստ կանխասաց ազգարարութեան սուրբ գրոց. կարգերն ու կանոնները կը խանգարուին, անօրէնութիւնը կը բազմանայ. խաղաղութիւնն ու սէրը կը վերանան, հաւատարմութիւնն ու արդարութիւնը անհետ կը լինի և կը տիրէ եղծումն ու ապականութիւն։

Այսպիսի եկեղեցականք, ինչ աստիճանէ և վիճակէ կուզէ լինին, ձեռնադրողք և ձեռնադրեալք իրենց չարեաց մէջ յարատևողք և յամառեալք թէպէտ, ըստ վկայութեան սուրբ գրոց և ըստ օրինաց եկեղեցւոյ, լուծուած են իրենց կարգէն, աստիճանէն և իշխանութենէն. թէպէտ ճշմարիտ եկեղեցականներ չեն, այլ անիրաւութեան մշակներ և անհաւատարիմ անտեսներ են, թէպէտ Աստուծոյ վրէժխնդիր բարկութեան ենթակայ են, սակայն ի՞նչ օգուտ, որ նոյն պաշտօնիս և անուամբ ճանաչուելով՝ բանիս և գործով գայթակղութիւն կը սերմանեն. քանի որ չեն պատժուիր, քանի որ պաշտօնապէս և հրապարակաւ չեն լուծուիր, այլ ընդհակառակն կը վարձատրուին և կարևոր պաշտօններու կը կոչուին. հարկաւ արգելք կը դառնան

բոլոր բարեկարգութեանց և ազգային յառաջադիմութեան, պատուհաս են ազգին և կորուստ ժողովրդեան, ապականութիւն են բարուց, արատ ու նախատինք են Աստուծոյ պաշտօնին. որոյ համար վրէժխնդրութիւն կ՚սպառնայ Աստուծոյ օրէնքը թէ այնպիսի եկեղեցականաց և թէ նոցա ձեռաք ապականուած ժողովրդեան։ (Մաղաք. բ։ Չ.աքար. Երեմ. իգ։ Եզեկ. ժգ. լգ. և լդ։ Այս գլուխներն ամբողջ կարդալով և մանաւոր համարներու վրայ յատուկ ուշադրութիւն դարձնելով՝ և բաղդատելով մեր ներկայ վիճակին հետ, կը տեսնենք որ Աստուծոյ խօսքի ճշմարտութիւնը ամէն դարու, ամէն մարդու համար միևնոյն է, ժամանակն ու մարդուն դրութիւնը չէ կարող ճշմարտութեան յաւիտենական օրէնքին փոփոխութիւն տալ, զի կը տեսնենք, որ այսօր իսկ այդ կանխասաց ազգարարութիւնք անվրէպ կը կատարուին մեր աչաց առջև ամէն դառնաղէտ հետևանքներով. և այս այնքան յայտնի է որ հարկ չեմ տեսներ օրինակներ յառաջ բերելով ախուր նկարագրութիւններ անել։ Այն օրէն, որ սկսաւ մեր մէջ դաստիարակութեան հոգը անփոյթ և օտար ձեռքերու յանձնուիլ. երբ եկեղեցականութիւնը դաստիարակութեան գործին մէջ անկարող մնաց, այն ատեն խանգարուեցաւ ամէն բարեկարգութիւն։

Թերևս առարկուի թէ,—Ահա այժմ ևս կան քահանայներ և վարդապետներ որ կրթական ուսուցչական պաշտօններ կը վարեն, բայց դարձեալ սպասուած ցանկալի արդիւնքը չը տեսնուիր։—Շատ ճշմարիտ է այդ, վասնզի դոքա տէր չեն իրենց գործին, դոքա, որոց գործն ապարդիւն կը տեսնէք, կոչուած են այդ պաշտօնին, ոչ թէ արժանաւորութիւնին գնահատուելով, այլ կոչուած են կամ հզոր միջնորդներու ազդեցութեամբ, կամ լոկ անունի

և ձևի համար, կամ նոցա ապրուստին համար, և կամ ո՞ գիտէ, մի այլ ի՞նչ տեսակ ձախող նպատակաւ։ Եթէ դուք մի անգամ քննողական աչքով նայիք դոցա մեծագոյն մասին [1]) վերայ, առանց շլանալու նոցա արտաքին երևոյթէն, փառքէն և մեծախօսութենէն. եթէ գիտանք նոցա վարքն ու բաշքը, նոցա ուսուցանելու ապարդիւն և անբնական եղանակը իմանաք, ոչ թէ չէք յանձներ մտնուիրեր, Աղքին ապագայ յոյսերը, այլ անասուներ անգամ չէք հաւատար, վախնալով որ նոցա բնական յատկութիւններն ու յարմարութիւներ ալ չեղծեն։ Վասնզի դոքա, ըստ մեծի մասին իրենց ուսուցած առարկաները չեն գիտեր, չեն ալ աշխատիր գիտանալու։ Դոքա չեն գիտեր նաև մանկան մտաց վիճակն ու ստատճանը, կամ անդէն այն բանը, որ դեռ ժամանակը չէ, կամ անդէն այն կերպով, որ աշակերտը չէ կարող ըմբռնել, ուրեմն ի՞նչ արդիւնք կարող է գոյանալ։ Դոց յայսմանէ, դոքա իրենց անխոհեմ և անզգոյշ խօսքերով ու գործքերով կաղդեն երախային վրայ և կը տպաւորեն նորա մտաց մէջ մանկան սկզբունքներ, ստութիւն, խարդախութիւն, գողութիւն և ուրիշ անանկ մոլութիւններ, զորս ես չեմ համարձակիր յիշել։ Դոքա այնքան յամառ, յանձնապաստան և անձնագով են, որ խրատի և դիտողութեան ալ չեն անսար, մինչև իսկ կը յանդգնին արածնին և ասածնին արդարացնելու ձգնել, որով կը յայտնեն ամենայն մասամբ խորին ագիտութիւնին, և հոգեբանութեան խսպառ անտե-

[1]) Կայ փոքրիկ մի բացառութիւն, որ գիտեն իւրեանց պաշտօնի նշանակութիւնը և արժանաւորութեամբ կը կատարեն, որոց մի քանին անձամբ կը ճանաչեմք, ու սրտովին կը յարգեմք. նոցա մասին ուրիշ առթիւ մտադիր եմք խօսիլ և յայտնել անուններն ու գործքերը։

A 3961 II

դեակ լինելին, իսկ այս վիճակի մարդկան դաստիարակութեան կրթութեան և ուսուցչութեան պաշտօն յանձնելը ապշութիւն է և երախայները բարոյական մահուան մատնել է։

Մեր այս բոլոր ասածները կարող էինք կենդանի օրինակներով ապացուցանել, բայց չեմք կամիր անձնաւորութիւններ մատնանիշ անելով անձնական պատիւներու դպչիլ, համոզուած լինելով, որ մեր ասածներն ամեն օր ամենուն աչքին առաջև գործուած իրողութիւններ ամենուն յայտնի բաներ են։ Մեր խօսքն նորա համար է, որ անաչառքնեն եկեղեցւոյ և առհասարակ կրթութեան պաշտօնէից մնաւոր և բարոյական վիճակը և այնպէս պաշտօնի կոչեն և ապա դաստիարակութեան արդիւնք պահանջեն։

Գ.

Դաստիարակութեան համար մեր Նախնեաց սահմանած կանոնը։

Այս դարուս մէջ դաստիարակութեան խնդիրը մեծ ուշադրութիւն գրաւած ամեն միտք կզբաղեցնէ։ Անձերնին ազգային կրթութեան նուիրող բարեջան անձինք, կաշխատին կը աքնին կրթութեան, ուսման և դաստիարակութեան դիւրին եղանակներ գտնել. օտար ազգաց ծրագրերը, եղանակներն ու դրութիւնները կը քննեն կը թարգմանեն և կօրինակեն. կը զարմանան նոցա վերայ և գովեստիւ նոցա գործադրութիւնը կառաջարկեն։ Իրաւամբ կը դատապար-

տեն և կանարգեն մեր նախորդաց արդէն զեղծեալ եղանակները. բայց աւելի լաւ և օգտակար բան արած կը լինէին եթէ բուն մեր նախնեաց ընդունած ու աւանդած կանոնն ու գործ դրած եղանակները ուսումնասիրելով նոցա վերայ բարձրացնէին իսկապէս ազգային դաստիարակութեան շէնքը, ցոյց տալով որ մենք էս ունեցեր ենք ուղղութիւն, բայց թողեր ու մոռացեր ենք։ Շատ հաւանելի է օտարներէն լաւ բաներ օրինակելը բայց մեծ իմաստութիւն պէտք է զանոնք իւրացնել և Ազգին դրութեան յարմարացնելը, առ որ մեծ ու խորին հմտութիւն պէտք է և մտադրութիւն հարկաւոր է ազգին ծագման, նորա դրութեան, բարուց, մտքերուն, բնական և բարոյական կազմութեան, զարգացման, յատկութեանց ու յարմարութեանց. բնակութեան տեղերուն դիրքերուն, ապրելու եղանակին ընտանեկան կեանքին և այլ շատ բաներու. մանաւանդ նորա բուն ազգային դաստիարակութեան նախնի օրէնքներուն. ապա նոր ընդունածները նոցա վերայ ձուլելով շինել սեպհականութիւն։

Մենք չենք կարող խոստանալ առ այժմ այս տեղ մեր Նախնեաց դրութեան վերայ շատ բան խօսիլ, զի ամէն առ ձեռն դիւրութիւններէ զուրկ և անհաստատ կացութեան մէջ կը գտնուինք. այլ ինչ որ այժմ կարողանանք գրել, այնչափ միայն կը լինի, որ սաւիթ կը տանք սոյն ամնիւ ու վսեմ աշխատութեամբ պարապողներուն, որ առաւել մտադրութեամբ քննեն մեր Նախնեաց աւանդած կանոնները և իրենց աշխատութիւններն ազգային կեանքին յարմարացնեն. որ Ազգը ամբողջ մնայ և չէ թէ օտարին յարի։

Մեր Նախնիք Աստուծոյ խօսքին երկիւղած հպատակութեամբ, „կը մուցանէին իրենց զաւակները Տիրոջ ուսմանքն ու խրատովը“. և գիտնալով որ քրիստոնեայ ժողովուրդն է „քահանայութիւն, թագաւորութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական“, այնպէս կը համարէին որ իրենց զաւակները կարելի է մի օր քահանայ, վարդապետ, եպիսկոպոս, կաթուղիկոս և մինչև իսկ թագաւոր կրնան լինիլ, մանաւանդ այս սուրբ հանգամանքն թէ—իրենք Աստուծոյ սեպհական ժողովուրդն են—, առայն կը ջանային պատրաստել իրենց զաւակները, և այս նպատակին համար երեք կրթարաններ ունէին, ա—ընտանեկան յարկը բ—եկեղեցին. գ—ժամանակին գտնուած ուսումնարաններն ու վանքերը: Այս երեք կրթարանաց մէջ կարգաւ և աստիճանաբար կը զարգանային մանուկ առաքինութեամբ և իրենց ժամանակին գտնուած ուսումներով և դիտութեամբ:

Քրիստոնէութեան ոսկէդէն դարուն մէջ, երբ հաւատքը լուսաւոր, հաստատ և գործնական էր, երբ ասուածապաշտութիւն և սէրը վառ ու ջերմագին էր, երախան մկրտութենէ տուն դարձած ատեն՝ ծնողք ջերմեռանդ և երկիւղած զգացմամբ կընդունէին զայն իբրև Աստուծոյ ողջեգիրը և ձեռնք կը հանդիսէին նորա խնամակալը. այն օրէն կը սահմանուէին և մանկան ճշմարիտ դաստիարակները, որք էին ծնողք, ինքահայրը և արժանաւոր քահանայն. որք ամենայն պարկեշտութեամբ կը վարուէին երախայի հետ, վ՚զգուշանային ամեն անպատշաճ խօսքէ և գործէ, փախնալով որ մանկան զգայարանքէն չընդունի նորա միտքը մի վատ տպաւորութիւն և չ՚ազդի հասակին հետ:

Երբ մանկական լեզուն կը բացուէր և կսկսէր բառեր թոթովել նախ Աստուծոյ բարերար անունը և նորա օրհնութիւնը կը սովրեցնէին, հասակին աճելուն և լեզուին

թեքելուն հետ կաւելցնէին կարճ նախադասութիւններ, և ինքնին սովորած սխալ բառերն ու նախադասութիւնները կուղղէին։ Մանուկը զարգանալով օրըստօրէ և ցանկալով գաղափարներ հաւաքել, կը հետաքրքրուէր զանազան հարցերով, ծնողք կը ջանային ըստ կարի գոհացնել, ամեն հարցի բացատրութեան հետ Աստուծոյ բարութիւն ու ողորմածութիւնը ցոյց կըտային։

Երկրորդ։ Արարածոց զուարճալի և հիանալի տեսարաններով կրքաղցնէին. երկնքի, արևու, աստղերու և լուսնի գեղեցկութիւնը կը ցուցնէին, նոցա պաշտօնն ու օգուտը կուսուցանէին. եղանակաց փոփոխութիւնը, բուսոց, ծառոց, պտղոց տեսակները, նոցա պիտանութիւնը կը ծանուցանէին. բուսականաց ծլելուն ծաղկելուն, պտղոց խակին ու հասունին ճաշակաւոր և օգտակար յատկութեանց վերայ 'ի պատահել առթին կը խօսէին, ծաղկանց հիանալի գեղեցկութեան, հոտին, գոյներու զմայլելի տեսքին վրայ մանկան հետաքրքրութիւնը շարժելով ուշադրութիւն անել կը տային, և այս ամենուն մէջ Աստուծոյ մեծութիւնը, բարութիւնը կարողութիւնը և անսահման գեղեցկութիւնն ևս կը ճանչցնէին և կամաց կամաց նորա բոլոր կարողութիւններուն, մանաւանդ ամենուրեք, ամենատես և ամենագէտ լինելուն վրայ երկիւղածութեամբ և զգացմամբ կը խօսէին ծնողք, որոց կ'օգնէին քահանայն և ինքահայրը. միաբան միևնոյն բնական ուղղութեամբ կը հասցնէին մանուկը 'ի ճշմարիտ աստուածգիտութիւն և կը շարժէին միշտ նոր բան սովրելու հետաքրքրութիւնը։

Երրորդ. Երախան զարգանալով օրըստ օրէ և իմացողութիւնը բացուելով՝ կ'սկսէին բարձր տեղեկութիւններ տալ. որչափ կարելի է միշտ նիւթեղենաց հետ կցորդելով. խորին երկիւղածութեամբ ամենասուրբ Երրորդութեան խոր-

հուրդը կը բացատրէին. ոչչափ և ինչ կերպով որ երախան կարող էր իմանալ և ըմբռնել, կը ջանային ուսածներովը զարթուցանել նորա մէջ երկիւղած հաւատք։

Չորրորդ. Կարգաւ կը սովրեցնէին արարածոց ստեղծումը. Երեշտակաց, նոցա պաշտամանց և առ մեզ վերաբերութեանց մասին սուրբ գրոց աւանդածները կը պատմէին, հպարտ և անհնազանդ հրեշտակաց անկումը բարոյական իմաստովը կը բացատրէին, միշտ զբօսալի եղանակաւ, երկիւղած ու քաղցր պարապմունք արած կաւանդէին, զգայական ու մտաւորը միմեանց հետ խառնած, հեշտութեամբ կուսուցանէին։

Հինգերորդ. Մարդուն ստեղծումը, նորա անմեղութեան վիճակը, պատուիրանազանցութիւնը սորա հետեւանքն եղող մարդուն անկումը, կորուսած նիւթական և հոգեկան բարիքը, զորս նորէն ստանալու համար աշխատութեան և պատուիրանապահութեան հարկը. փրկչի խոստումն ևայլն. նոյնպէս և այժմ պատուիրանազանցներուն կրելիք վնասներն ու պատիժը կը պատմէին ու կը բացատրէին։

Վեցերորդ. Յիսուս Քրիստոսի մարդեղութիւնը և բոլոր անօրէնութիւնները մինչև սուրբ Հոգւոյն գալուստը՝ Տէրունական ծաներու օրերը կարգաւ կը սովրեցնէին, նոյն պէս և ամէն ծաներու բացատրութիւնը կը տային։ Յաճախ եկեղեցի տանելով պատկերները ցոյց կը տային և նոցա վերայ կը սովրեցնէին և մանուկը ուրախութեամբ կը ջնէր, դիւրութեամբ կըմբռնէր ու նորա անմեղ մտաց մէջ հաստատ կը տպաւորուէր։

Եօթներորդ. Կը յայտնէին Քրիստոսի նորէն աշխարհ գալու խոստումն։ Հոգւոյ և մարմնոյ յարութիւնը, արդար ու անաչառ դատաստանը արդարոց փառաւոր և երջանիկ կեանքը, մեղաւորաց դառն ու սոսկալի պատիժը։

Այս կերպով՝ երախային հասակին աճելուն հետ՝ կաճէր ու կը զարգանար նորա միտքը, կը կրթուէր սիրտը, կուղղուէր բարքը և նա կը ճանչնար արարածոց սկիզբն ու վերջը. կրօնի ճշմարիտ ու կատարեալ բարոյականութեան սերմունքը կընդունէր իւր մանկական քնքուշ սրտին ու մանուկ մտքին մէջ և շարունակ հսկող աչաց և կրթիչ ձեռաց ներքև իր խնամուէր, կը պաշտպանուէր, կը մշակուէր, կաճէր ու կունականար։

Ութերորդ. Ծնողք միշտ եկեղեցի տանելով կը վարժեցնէին մանկան Աստուծոյ տունն յաճախել, պաշտամանց ու հանդիսից ներկայ գտնուիլ ընթերցմունքը երգերը և քարոզները, որ եկեղեցւոյ մէջ միշտ առաջին տեղն ունէր, մտադրութեամբ լսել. կը սովորեցնէին հանգիստ կենալ, միտ դնել և անձայն երգակից ու աղօթակից լինել. սովրել և սովրածը միշտ կրկնել։ Ցուն գալով տեսած և լսածներուն վրայ հարցեր կանէին. երախան սովրածներն ուրախութեամբ կը կրկնէր. Ծնողք կը խնդացնէին, կը գովէին և կը քաջալերէին. սխալները կուղղէին և աւելի մտադրութիւն կը պատուիրէին. մանուկը ուշադրութեան և մտադրութեան կը վարժուէր. կը յարէր իւր ազգային եկեղեցւոյն. անդ յաճախելով՝ աստուածպաշտութեան կարգաց հետ՝ կընտելանար և եկեղեցւոյ լեզուին. տեսնելով գպրոցական մանուկներ, որ այնտեղ կերգեն ու կը կարդան, եռանդով կը ցանկար որ ինքն ևս մանուկցի պաշտամանց. և ահա ծնողք, նորա այս փափաքը կը ջանային յօգուտ գործածել, առիթ կունենային կարդալ գրել սովրելու սէր արթնցնել. այնուհետև դորա հոգսը կը քաշէին։ Թէպէտ մեր չէնք գիտեր այսօր թէ այն սաեն նոքա ինչպէս կ'ըսկսէին գրերը ճանչցնել կամ ինչ գիւրին եղանակ ունէին, բայց մեր օրերը տեսնուած պնակէն, զոր կաւով կը ծե-

փէին և վրան երեք տառ գրելով կը վարժեցնէին, մեզ կարծել կըտայ թէ սկիզբներն աւելի կանոնաւոր և դիւրին եղանակներ կային և այս վերջինը նոցա աղաւաղած մի ձևն էր. ինչ որ լինի, սակայն յայտնի է, որ Դպրոցներ լաւ ուսումնասիրած էին մանուկն, նորա տկար ու զօրաւոր կողմերը և նորա բնական ու բարոյական մասերը. կարծես մի աւանդական ծրագիր հայրը որդւոյն ժառանգութիւն կը ձգէր, որ յաջորդաբար երկիւղածութեամբ կը կրթէին իրենց զաւակները և մինչև դպրոց զրկելը բաւական պաշար տուած կը լինէին։

Եկեղեցին մի սոյդ վարժարան էր երախայից և հասակաւորութեան համար, ուր յաճախ կը ժողովէին ժամերգութիւն սկսելէն յառաջ և մի գիտցողի առաջնորդութեամբ կ'սկսէին ծայրէ ի ծայր սերտել պատկերները, որ այն ատենները աւելի պատմական կարգաւ դասուած էին, [1]) մինը կը պատմէր, այլք ունկդիր կը լինէին. մանաւանդ երախայք յառաջ մղուելով ծերերն անհանգիստ կանէին մինչև ակնապիշ պատկերը գիտեին. բերանաբաց կըմնայէին և պատմողին ուշադրութեամբ կը լսէին. երբեմն ոմանք հարցեր կուղղէին, որում եթէ պատմողը չը կարողանար պատասխանել երեցին կը դիմէին որ արդէն կանխած այն տեղ կը գտնուէր։ Ընդհակառակ կը լիներ նաև յաւարտ ժամեր-

---

[1]) Պատկերներն եկեղեցւոյ մէջ ընդունուած է ուսուցանելու, մտադրութիւն ուղղելու և հաւատոյ ուսումը հաստատ ու մշտանջենաւոր պահելու համար, եթէ անհոգութեամբ և թուլութեամբ զեղծումներ մտած են, աշխատելու է զեղծումները վերցնել և ոչ պատկերները, ինչպէս օտար հակառակորդներէ խաբուելով արին ոմանք տեղ տեղ. իսկ պատկերներն նախնական գրութեամբ իրենց նպատակին գործածելու է, որ շատ օգտակար է և եկեղեցւոյ մէջ խիստ կարևոր։

գութիւն։ Մայրը բռնած երեխային ձեռքին, կամ գիրկն առած՝ մտով ցոյց կը տար պատկերին մէջ, ինչ որ մանկան հետաքրքրելի կը համարէր. և այս խիստ կանուխ, դեռ լեզուն անգամ չը բացուած, նախատէս կը վարժեցնէր, որ ապա աւելի դիւրին ճանաչողաց բացուի իւր դասախոսութեանց։ Մայրերն՝ այո, գորանէն սկսած իրենց քաղցրիկ օրօրներով և սիրազեղ գգուանօք շատ օգտակար գաղափարներ կը տպաւորէին։ Նախնի դարուց մէջ մեր ամենէն մեծ, բարի և օգտակար մարդիկը իրենց մարց դաստիարակութեան պտուղներն են. բայց այն մայրերը ներկայ մայրերու պէս չէին. նոքա շատերը կատէին զի այդ անառակ կանանց յիմար մարդիկը խաբելու համար լարած որոգայթն էր։ Նոքա շատաշրջիկ չէին, ինքզինքնին օտարին ցոյց տալու կամ հաճոյացնելու մոլորութիւնը չունէին, երախայական պճնասիրութիւնը զերինք չէր զբաղցնէր. ինչ որ ազգային էր, զայն շատ կը յարգէին. օտարին ունեցածին աչքք չունէին, դատարկ կամ անօգուտ ժամանակ չէին անցըներ. միշտ օգտակար աշխատութեամբ պարապած կը լինէին. իրենց մարդերուն օգնականն էին և ոչ թէ կուռքը կամ անօգուտ բեռը. իւրեանց որդւով և ամուսինով միայն կը պարծէին և ոչ թէ շորերու պատառներով։ Այսպէս էին մեր նախնի Մայրերը որոց ազգօգուտ պտուղներու պատմութեանց հատորը ամենով կանէ այսօր այժմեան ունայնասէր մայրերու ցնդական հմտութիւնները և կը կշտամբէ զանակ մնացանելու դժուարութենէն փախչող հեռացող խպշիկ մայրերու յիմարութիւնը։

Չորրորդ. Եմեն տեսակ չարութիւն զզուելի խօսք և անպատշաճ գործք մեծ զգուշութեամբ և սաստիկ կարգիլէին. կաշխատէին սանձել կատաղի կիրքերը. հսկողութիւն կանէին որ խաղի մէջ ընկերաց հետ սիրով և հա-

մաՀայնութեամբ վարուին. խստիւ կարգիլէին ստախօսութիւն, հայհոյութիւն և գողութիւնը. վերջապէս ամենօրեայ շարժմունքներէն խօսքերէն ու գործքերէն առիթ առնելով չարն ու բարին կը հասկացնէին և ընտրութիւն անել կը տային։

Տասներորդ. Մահուան անհրաժեշտութիւնը կիմացնէին. անմեղ կեանք վարողին երկար, առողջ և զուարթ ապրելը կը հաստատէին սուրբ և առաքինի մարդկան պատմութիւնով. քաղցր հանգիստ խղճով և ուրախութեամբ աշխարհէս մեկնելը զմայլմամբ կը պատմէին։ Իսկ չար ու անառակ կեանք վարողին թշուառութիւնը, տարտնապը, ցաւը, նեղութիւնը, ամենագէտ ահաւոր դատաւորին ամենատես աչաց առջև ներկայանալու սոսկումը և անվախճան տանջանաց նկարագիրը կանէին սարսափով և կը յորդորէին մանուկը բարի մարդ և բարի քրիստոնեայ լինելու։ Այս ամենը կը յաջողէր շատ դիւրութեամբ, զի սիրով և յօժարութեամբ կը կատարէին. խիստ կանուխէն սկսած լինելով և յարատև և շարունակելով անզգալի կերպիւ կը ապատրաստէր մանկան մտքին սրտին և վարուց մէջ. իսկ մանուկը սորած լինելով այս ամենը արդէն հասած կը լինէր եօթնամեայ հասակը։ Եթէ մինչ ցայս դար շարունակուած լինէր այս եղանակը, ոչչափ կատարելագործուած կը լինէր. նայելով դարուս ուսանելի առարկայից շատութեանց, ոչչափ ժամանակ շահած պիտի լինէր երեխան դպրոց մտած ատեն բաւական պաշարով և ուսանելոց վերայ քիչ շատ ծանօթութիւն ունենալով, այժմ եօթն տարեկան ազան շատ տեղ տակաւին դպրոցի յարմար չը սեպուիր, սակայն մինչև այդ հասակը մի օգտակար բան չը սովորելէ զատ, արդէն շատ վնասակար գաղափարներ ստացած կը լինի շրջապատող ընկերներէ և յարաբերութիւններէ։

Այս հասակին ծնողք կը տանէին երախայն յեկեղեցի մի շնորհակալութեան ընծայով. ջերմեռանդութեամբ և սրտաբուղխ մաղթանաք կը նուիրէին Աստուծոյ՝ յանձնելով սուրբ Հոգւոյն շնորհաց. ապա կը տանէին վարժապետին, որ մեծ զգուշութեամբ ընտրուած կը լինէր ժողովրդէն և ամենուն յարգի ու պատկառելի էր. յաճախակի կը լինէր նա մի ընտրեալ առաքինի և աստուածահաճոյ քահանայ, սարկաւագ կամ Աստուծոյ պաշտօնին նուիրուած մի աշխարհական բարի անձն, որ ընդունելով մանուկը ծնողաց ձեռքէն, կրսկսէր շարունակել մանկան ընդունակութեան համեմատ։ Միւնոյն հսկողութիւնը կը լինէր նորա վարուց և բարուց վերայ. վարժապետ և ծնողք միշտ միաբան էին այս պարագային մէջ. վարժապետին անօրինածը ծնողք կը յարգէին. դիտողութիւնին առանձին կիմացնէին, մանկան առջև վարժապետը միշտ բարձր դրից մէջ կը պահէին. թերևս արժանիքէն վեր պատիւ կը տային։

Այսպէս կը պատրաստուէին ժողովուրդի երեխայքը անխարդ, հարուստ և ազքատ միևնոյն ուղղութեամբ. հետևաբար և ժողովուրդք։ Յետոյ պարք և պատիւ կը համարէին ուսանիլ մի նիւթական արհեստ կամ բռնել մի գործ և զբաղիլ անով, աշխատասէր կենաց կը վարժուէին. պէտք և ապրուստ հոգալ և ընտանեաց խնամ տանել կը սովրէին. միևնոյն ժամանակ մասնաւոր շնորհք երաժտութիւն կամ լաւ առոգանութիւն ունեցողներն ինքնայօժար կը մասնակցէին եկեղեցական պաշտամանց, առանց փոխարէնի։ Հասկանալի է ուրեմն, որ դժուարին չէր՝ պէտք եղած ժամանակ՝ ընտրել այսպէս դաստիարակուած ժողովրդի մէջէն ծանօթ լաւագոյնը և կոչել յեկեղեցականութիւն, որոյ ընտրութիւնը միշտ ժողովրդի իրաւունքն եղած է։ Արհեստը կամ գործը, միայն թէ անբարոյական

չը լիներ այն. արդեւլը կամ անպատուութիւն չէր համարուէր, ընդհակառակը անգործութիւն էր անպատիւ և արհամարհուած. զի գիտէին նոքա, որ մեր փրկիչն իւր Առաքեալները կոչած ատեն զբաղուած էին նոքա գործերով. նոյն իսկ Փրկիչ ևս իւր քարոզութիւնն սկսելէն յառաջ զբաղուած էր գործով։ Նոքա յարմարութիւն ու հմտութիւնը, վարքն ու բարքը կը նայէին. ընտրութեան ժամանակ խիստ երկիւղած էի և պատասխանատուութեանէ կը վախնային. չունէին նիւթական նկատումներ. երկիւղալի էր կողմակցութիւնը կամ յանպատեհս միջնորդութիւնը և կաշառը, որ բնաւ ծանօթ չէր։ կարծիքներ կը յայտնէին ընտրելոյն վայ ունեցած անձնական ծանօթութեամբ և խղճի վկայութեամբ. իսկ ընտրութիւնը վերջանալէն յետոյ անհամաձայնութիւն չէր երևեր. ընտրուողին կը յայտնէին ժողովուրդի կամքը և նա կընդունէր իբրև աստուածային հրաւէր. կը շնորհաւորէին զինքը, կը յորդորէին որ հետևի այս ինչ քահանայի օրինակին, որ արթուն և ժիր էր իւր պաշտօնին, հոգ կը տանէր ժողովրդեան կենաց լաւութեանը, անաչառ և արդար գթած ու բարեսիրտ էր, կը սիրուէր ու կը յարգուէր ժողովրդէն օտարներէն և հեռաւորներէն անգամ։ Այսպիսի օրինակներով խրատներ և քաջալերութիւններ կը տային և նա կը լսէր ու կընդունէր յօժարութեամբ. ապա բարեմաղթութիւններ անելով փոխադարձ խնդակցութեամբ միխիթարուած կը մեկնէին։ Իսկ նոր ընծայն պաշտօն ու ձեռնադրութիւնը ընդունելէն վերջը՝ բոլորովին նուիրուած կը լինէր ժողովրդեան հոգևոր և բարոյական օգտին, իւր տեսածին և ուսածին պէս կը շարունակէր. կը ջանար իւր նախորդաց լաւագոյնին նմանելը Այնու հետև նորա մշանջենաւոր պարապմունքը կը լինէր սուրբ գրոց ընթերցումը

և եկեղեցական Հարց խմբասուն և հրահանգիչ գրուածները, որոց արդէն բաւական ծանօթ էր։ Կը հսկէր իւր հոտի վերայ պէպէս անձնադիր հովիւ. ժողովուրդի ցաւը իրեն կը համարէր և կաշխատէր թեթևացնել. կը քարոզէր Աստուծոյ խօսքը բանիւ և գործով, կը խրատէր, կուսուցանէր, կը յանդիմանէր և կը մխիթարէր. ծագած վէճերը կը խաղաղէցնէր ամենայն անկողմնակալութեամբ. մանուկները կը կրթէր քաղցրութեամբ և հայրական սիրով. ոչ կը պարծէր և ոչ կը խրոխտար, կը կատարէր ամեն բան իրրև պարտաւորութիւն և կը վախնար պարտաքանց գտնուելէ, ինչպէս Աստուծոյ հաւատարիմ անտես, կը կերակրէր Աստուծոյ դերդաստանը հոգեպարար խօսքերով։ Ոչ մի կենցաղական նկատումն կամ նպատակ չունէր, միայն կը ջանար իւր պարտքը կատարելով ծառայած լինել Աստուծոյ. Նիւթական շահու ոչ ակնկալութիւն ունէր և ոչ հոգ. չի իւր համեստ, չափաւոր և սակաւապէտ կենաց կարևոր եղածը ժողովուրդը կը հոգար յօժարամիտ սիրով է կը համարէր նուէր Աստուծոյ. որով լաւն ու առատը կընծայէր. եկեղեցականը վարձին չէր, եկեղեցականութիւն արհեստ կամ նիւթական շահու դուռն չէր...։ Իւր տան մէջ կը պահուէր կարգ, համեստութիւն և չափաւորութիւն. երիցկինը նմանապէս մայր էր հասարակաց, հոգացող և խնամող, պարկեշտ ու բարի օրինակ կանանց։

Քահանայ և ժողովուրդ այսպէս քաղցր ու սուրբ սիրով կապուած միմեանց հետ, կը կազմէին մի հոգևոր դերդաստան և Աստուծոյ օրհնութիւնը անսեռիւ կը տեսնուէր հասարակութեան մէջ։

Իսկ եթէ մանկութենէ որոշուած լինէր մէկը եկեղեցականութեան կամ վարդապետութեան, նորա կրթութիւնը

շատ զգուշաւոր և խիստ էր. կարճ խօսքով բացի կարևոր ուսումներէ և վերոյ յիշեալ կրթութիւններէ, մեծ հսկողութիւն կը լինէր նորա կենաց բոլոր շրջանների մէջ վարուց, հագնուց և ախորժակաց վերայ. հոգեկան կարողութիւնքը, ներքին և արտաքին զգացումներով և տեսութեամբ կը ըմբռնեցնէին, կիրքերը չափաւորելու, սանձելու և օգտակար գործածելու համար ամեն փորձերէ կանցնէին, ժուժկալութեան, աշխատութեան, աքնութեան, քաղցի, ծարաւի, ցուրտի, տաքի, և այլ խստմբեր կեանքի վարժեցնելով մինչև երեսնամեայ հասակը կը հասցնէին։ Խնամակալք՝ երբ վստահ կը լինէին ընծայելին կատարելութեան վերայ և երբ կը պատրաստուին կոչել յաստիճան եկեղեցականութեան, դարձեալ երկար հարցափորձեր կանէին. պատահելիք ծանր դժուարութիւնները, հրապուրիչ փորձութիւնները, ներքին և արտաքին բարոյական պատերազմները ամենայն պարագայիւք կը յիշեցնէին. երբ հաստատ որոշումը և կատարեալ խոստումը առնէին. ապա թէ վերսին զգուշութիւններ պատուիրելով, քաջալերութիւններ տալով ծոմով և աղօթքով կը տային հոգևոր աստիճան, հետզհետէ իւր արդեանց և արժանաւորութեան համեմատ կը հասցնէին աւելի բարձրագոյն աստիճանները։

Այսչափ զգուշութեանէ յետոյ երբ ծանր յանցանքի մէջ անկանէր, կարգին ու աստիճանին անարժան գործի մէջ գտնուէր, յանցանքին համեմատ ապաշխարութեան կ'ենթարկէին կամ կարգէն կը լուծէին։ Այս արդարութիւնը այնչափ խիստ կը պահուէր, որ ոչ ոք չէր համարձակեր միջնորդել կամ հնարքներով ազատել ջանար։ Մեծաւորը ևս այնքան բարոյական մեծ արժանիք ունէին սրբութեամբ և օրինապահութեամբ, որ ոչ ոք չէր համարձակեր նոցա անօրէնութիւնը խանգարել. մանաւանդ գի-

տէին, որ այս պատիժը եկեղեցական ատիճանի սրբութիւնը և հասարակաց բարեկարգութիւնը պահպանելու համար էր։ Մեծաւորք չէին զեղծանիր իրենց իշխանութեամբ, իրենց անձին դէմ եղած անարդանաց վրէժխնդիր չէին, բայց՝ ի խրատ և յանդիմանութեանէ ուրիշ պատիժ չունէին, օրինաց խստութիւնը միայն ծանր դէպքերու մէջ կը գործադրէին. նոյն իսկ դատապարտեալն անդամ հեզութեամբ ճանչնալով իւր յանցանքը և պատժոյն արդարութիւնը. չեր համարձակեր միջնորդի դիմել, ոչ ալ իւր անձն արդարացնելու ջանալ (ինչպէս շատերը կանեն այժմ խաբերայ հնարքներով.) այլ զղջման և ապաշխարութեան կը պարապէր ամենայն խոնարհութեամբ, որպէս զի անձը կրթէ և ճշմարիտ ներողութեան համար։ Իսկ եթէ մին հասարձակեր ըրբանալ, յանդգնել և մի որև է միջոցով օրինաց կարգադրութեան հակառակիլ իշխանութեան դիմադրել։ նա կը բանադրուէր և հասարակութեան առջև խոթացեալ անդամ կը համարուէր, մինչև զղջալն ու ուղղուիլը, որոն կը նպաստէին և այլք խրատելով ու յանդիմանելով, ոչ թէ այժմեան պէս կը գրգռէին և չարութիւնը կը քաջալերէին։

Պաշտաւ սոսկալի բան էր, անունէն անդամ կը փախչէին, ընդունող չը կար, մատուցողը չարաչար կը յանդիմանուէր, դիտալով որ խափանիչ է ամեն արդարութեան և ճշմարտութեան, խանգարիչ ամեն բարեկարգութեան. չը կար նիւթական վարձատրութիւն որ գրգռիչ է շատ վնասակար կիրքերու, այլ ատիճանէ յատիճան կը բարձրացնէին արժանաւորները, բայց ամեն ատիճանի հետ նորանոր պարտաւորութիւններ ալ կաւելցնէին. ուստի և նախանձ, փառասիրութիւն, ագահութիւն, անարգ շահինդրութիւն հաղիւ երբէք կը սեմնուէին և իսկոյն կը պատժուէին։

Այժմ մի ակնարկ ձգենք այսօրուան յաձախած գլխարկներ, խաչեր, նշաններ և այլ նիւթական վարձատրութիւններ բաշխելու գեղծման վերայ. մեք կը տեսնենք խոկցն հոգեւորականութեան մէջ լոկ այդ պատճառաւ մնած անկարգութիւնները. կը տեսնենք, որ անարժաններն ալ ստացած են այդ պարգեւները, շատ անգամ արժանաւորը զրկուած է, վասնզի անարդար միջոցներու չէ ուզած դիմել կամ չէ յաջողած։ Ընդհանրապէս, անարժանք և մելիներն անգամ մի հնարքով ձեռք ձգած են այդ պարգեւները և կը խրոխտան լաւերու վերայ։ Կը տեսնենք նոյն իսկ հոգեւոր աստիճաններու անարդար բաշխումը. որովք պատճառ դրուած է պաշտօնեից անհոգութեան. խոտորնակ միջոցներու դիմելուն. բուն գործերնին, պարաբերնին, պաշտօնին թողած, ուշք ու միտք դարձուցած են պարգեւ ու աստիճան ստանալու և տեղի տուած են բամբասանց և շատ ուրիշ մելութիւններ։

Այս գեղծումները տարակոյս չը կայ, որ մեծաւորաց թուլութեանէ օտար ողդերէն մնած է, բայց պէտք է խոստովանել որ շատ անգամ և ժողովուրդը պատճառ տուած է, միջնորդելով, ստորագրութիւն տալով խնդրած է մի եկեղեցականի համար վարձատրութիւն, աստիճան, վիճակ, սուտ վկայելով նորա չունեցած բարեմասնութեանց և թաքցնելով նորա անպարմանութիւնքը. յորմէ հետեւած է այս օրուան ընդհանուր գեղծումն, հասարակաց տրտունջն ու դանդատը, բարեկարգութեան և յառաջադիմութեան դժուարութիւնը և որ ցաւալին է, վերցնելու, կարգադրելու և ուղղելու համար կարողութիւն չկայ, զի բոլանդակ Աղգին մէջ ան իշխանութիւն կը տիրէ։

Դ.

Անիշխանութիւն.

Չը կայ մի գործ կամ պաշտօն, որոյ յաջողակ կատարման համար չընտրուին պաշտօնեայք մասնաւոր քննութեամբ, չը կայ պաշտօնեութիւն մի, որ լաւին ու վատին մէջ տարբերութիւն չը դնէ. հասարակ արհեստաւորն անգամ իւր աշակերտաց և գործաւորաց յատկութեանն ու յարմարութեանը նայելով յարմարները կը գործածէ, անյարմարներն իշխանաբար դուրս կը ձգէ. որպէս զի իւր գործին վնաս չը բերեն և այլոց զեղծման պատճառ չը լինին: Այսպէս և ամէն պաշտօն՝ կանոնաւոր և արդիւնաւոր կատարուելու համար, կը պահանջէ պաշտօնեին յարտարագոյնը: Միայն եկեղեցականութիւնն է, որ տակաւ խոտորելով եկեղեցւոյ օրէնքներէն, կընդունի իւր մէջ անխտիր, առանց քննութեան, առանց հրահանգելու, առանց որ և է բացառութեան ամէն անյարմար անպիտանները. չարեաց և մոլութեանց մէջ ունայացած՝ ամենատոր վարուց և բարուց տէր անձինքը, առանց մանր պաշտօններով փորձելու և վարժեցնելու կը յանձնէ ծանր ու կարևոր պաշտօններ, որք ոչ միայն չեն կարող կատարելու, այլ և կը խանգարեն, ու կը փճացնեն, զոր իշխանութիւնը չէ կարող ոչ խրատել, ոչ ուղղել ոչ պատժել և ոչ մերժել, ամէն կողմ կը տիրէ անկարգութիւն, որ հզօր արդելք է յառաջադիմութեան. ամէն կողմ կը տիրէ կատարեալ անիշխանութիւն. առաւել քան զայս անկարգ, անկանոն, խառնափնդոր վիճակ կարելի չէ երևակայել: Ամէն տեսակ յանցաւորներ չարագործ պատժա-

պատեր, վոխանակ պատժոյ կընդունին պատիւ և պաշտպանութիւն, վիճակ և փարձառութիւն. ժողովուրդն իսկ կարծես ապշած մնըրուած, շատ անգամ կը պաշտպանէ յանցաւորը և կընդդիմանայ իշխանութեան, մինչդեռ բնաւ միջամտելու չէր, կամ յանցաւորը խրատելու էր։ Հրատարակիչը ևս անպատշաճ ոճով սայդ և անսայդ լուրեր անխոհեմաբար հրապարակ հանելով, վերջրին ամեն ակնածութիւն և ամթի, հեստել ապատամբել տուին ամեն օրինաց և կարգաց և Ազգը հասաւ յեսին ծայր անիշխանութեան, յորում մարգարէին, գուշակած պատուհասը սուգիւ կը կատարուի. „Մանուկը ծերին կընդհարի. խաբեայք կը տիրեն“, երես կառնուն կը խրոխտան, անձերնին ու չարած՝ լաւ գործերնին կը դրուատեն ու վիատին կարգաբացնեն, ժողովուրդին կամքը, կիրքերը շոյելով շողոքորթելով լաւերն ու ողջամիտները կը պարսաւեն և այսպէս խաբեութեամբ կապեն և ժողովուրդը կը մոլորեցնեն. որոյ ազգակործան հետևանքը օր յաւուր կը ծանրանայ ազգին վերայ և ամեն օգտակար ձեռնարկութիւնք ապարդիւն կը մնան։

Հեթանոս խնամատարը մի կարծես զմեզ յանդիմանելու համար սա ճշմարտութիւնը կը յայտնէ և զմեզ ամենահար կանէ. „Ուր չը լինի ինչ խիր ընդ չարս և ընդ բարիս, դիցեա դայ խառնակութիւն և խուռն արձակուրդ մոլութեանց։“ (Անեկ) Այս ճշմարտութեան ապացոյց ցաւալի դէպքեր ամեն օր կը պատահին և յայտնի օրինակներ զգացող սրտերու ցաւ կը պատճառեն։ Հիա կը տեսնենք ընդհանուր անկարգութիւն եկեղեցւոյ մէջ. անհոգ, թոյլ և զանցառու պաշտօնավարութիւն ատուածային պաշտամանց մէջ. լոկ շահադիտութիւն պաշտօնեից մէջ. կատարած գործերնուն խորհուրդին և նպատակին անտեղեակ. կրօնաւորաց մէջ անկրօնութիւն. ագահութիւն.

մնապաշտութիւն, մարդելոզութիւն, անտարբերութիւն կայն, նոյնը և ժողովրդեան մէջ. որում հետևած է անհնազանդութիւն և անհաւատարմութիւն՝ զաւակի և ծնողաց մէջ, առն և կնոջ, ընկեր՝ ընկերի մէջ. խարէութիւն, ուխտադրժութիւն, սուտ երդումն, զրկանք գողութիւն, խաղամոլութիւն. մէկ խօսքով ամեն չարիք ամեն մոլութիւն կը գործուին ամենայն ազատութեամբ, համարձակութեամբ և պարծանօք. եկեղեցական և աշխարհական իրարմով քաջալերուած՝ անկարգութեանց մէջ կարծես զերար գերազանցելու կը ձգտին և չը կայ մէկը, որ սանձէ և յուղղութիւն ածէ, վասնզի իշխանութիւն չը կայ. լոկ անուանական դարձած իշխանութիւնք ալ՝ ազդեցութիւն չունին, երբեմն ակար ու հնազանդ թեթև յանցաւորներու վերայ կը փորձեն իրենց իշխանութիւնը ամենայն սաստկութեամբ և կը մխիթարուին՝ կարծելով թէ իշխանութիւն ունին. իսկ մեծագոյն յանցաւորը սուտ ու փուճ պատճառներով կարդարցանեն.—ինչիւ.—վասնզի նա լերբէ, յանդուգն և շաղակրատ է. պէտք չէ յուզել որ հանդարտ մնայ.—: Այսպէս կանեն և այսպէս կը խորհին կառավարութեան ոգի չունեցողները, սակայն և այս մի պատճառ է իշխանութեան ազդեցութիւնը կոտրելու. զի այնու հետև լերբը աւելի համարձակութիւն գտնելով կիշխէ բարոյապէս. իշխանութիւնը կը լինի խաղալիկ նորա կամաց, կը քաջալերուին այնու հետև չարերը և կը վհատին լաւերը: Մի՞թէ անիշխանութեան հետևանք չեն ամեն անյաջողութիւնք և անկարգութիւնք. հար է մի բարձր հեղինակութիւն, որ մի օգտակար որոշումն անվրէպ գործադրել տալու ձեռնհասութիւն ունենար: Ամբոխալի ճշմարտութիւն է խոստովանիլը թէ—չը կայ: Եթէ կը կարծուի, որ—հրամայ, պատուէր, կանոն. ծրագիր, հրահանգ և

օրէնք հրատարակելով միայն օգուտ կը լինի, դա շատ սխալ է։ Առանց ներգործող արթուն հսկողութեան, առանց անձամբ օրինակ տալու օրինապահութեան, այդ ամենը անզօր և անշնչաբաներ, ծաղուս և հեղնութեան առարկաներ կը դառնան։ Եթէ մեկը — ինչ ասիճանէ կուզէ լինի — չը պահեր Աստուծոյ օրէնքը և իրմէ վերագոյնի օգտակար պատուէրները, եթէ մեկը յարգութեամբ չը կատարեր՝ լաւութիւնու օգուտը փոխով հաստատուած և հնութեամբ նուիրագործեալ եկեղեցոյ, Հայրենեաց և Ազգային օրէնքները. նա ի՞նչ երաշխաւորութիւն ունի նոր ու անզօր օրէնքներ պահելու։ Եթէ ժողովրդեան իշխանները — աշխարհական թէ եկեղեցական — անձամբ օրինակ չեն տար օրինապահութեան. ի՞նչպէս կը յուսան որ պիտի գործադրուին իրենց դրածները, որ շատ անգամ անօգուտ և անյարմար են մենք միւսին հակասական. ինքեանք իսկ չեն կարող գործադրութիւնը պնդել, և ահա այն վայրկենին կը ակարանայ իրենց իշխանութեան ազդեցութիւնը։ Օրէնք անգործադրելի են, երբ վստահութեան արժանի բարձրագոյն հեղինակութենէ չեն գար և վարձք ու պատիժ չունին. իսկ երբ անիրաւ է վարձուց և պատժոց բաշխումը և օրէնսգիրքը կամ հսկողք աչառութիւն և անհոգութիւն կանեն, այն ատեն արդէն օրէնքը մեռած է և ժողովուրդը վտանգուած։

Ունք գիտեր թէ այս մասին ինչ կը խորհին օրէնսդիրք, իշխանք, դէսք, տեսուչք և առաջնորդք ժողովրդեան, երբ իրենք իսկ օրինազանց և անհաւատարիմ կը գտնուին. եթէ միայն իրենց անունն ու փառքը բաւական կը սեպին ժողովուրդ կառավարելու և բարեկարգութիւն հաստատ պահելու, շատ կը սխալին. զի այդու միայն առօրեայ շլացումն և ժամանակաւոր ակնածութիւն կարող են ազդել.

իսկ գործով և արդեամբ յարատև կը պահեն ժողովուրդի մէջ հիացումը, երախտագիտութիւնը և հնազանդութիւնը։

Իշխանին յատկութիւնն է ընդհանուր սէրը իւր բոլանդակ սուրբ նշանակութեամբ, պարտաւորութիւնն է արդարութեան անաչառ գործադրութիւնը, որով բարեկարգութիւն ու խաղաղութիւնը կը յաջողի և կը մնայ անսասան, առանց որդ փշրուած է իշխանութեան գաւազանը խարխուլ է նորա գահը և մնա է կործանումը։

Ազգ մի պարտաւոր է իւր գործիչներու յատկութիւնն ու յարմարութիւնը ճանչնայ և խոհեմութեամբ ընտրէ ու պաշտօնի կոչէ. յետոյ սիրով հնազանդի նոնա. գործակցի հաւատարմութեամբ իւր պարտաւորութիւնները կատարելով։

Յարմար պաշտօնեայներ չընտրելով սխալիլ՝ անմտութիւն է. պատճառանաք և ցաւ նկատումներով անկարողներն ընտրել և յետոյ խայտառակել, նենգութիւն և վատութիւն է։ Ընտրել և փոխադրել պարտականութիւնները չը կատարելը յատուկ թշնամութիւն է, դիտմամբ ամէն լաւութեանց յառաջանալուն խափանիչ լինել է. հեռաւոր և ազգութիւնը ինքնին կործանել կը նշանակէ։

Մեր Ազգը չունի ազդեցիկ իշխանութիւն, մեր իշխանութիւնք չունին պարտակատար հնազանդ հեռաւոր. կարելի է ասել—հրամայող շատ, հնազանդող—չիք. խօսող շատ, գործող—քիչ։—Այս դրութեան մէջ Ազգ չապրիր. Ազգայնութիւն չի գոյանար և ճշմարիտ յառաջադիմութիւն չի լինիր...։

Ե.

Իմ ներքին համոզումս և հաւատքս։

Մեր այս բոլոր սխալներովն ու անկարգ անկանոն ընթացքով տակաւին Ազգայնութիւն և յառաջադիմութիւն յուսալու տկարմութիւն ունինք։ Մեք ցոյց տուինք ահա, որ ամբողջ Ազգը, եկեղեցականով և աշխարհականով խոտորնակ ճանապարհով կը դիմեմք դէպի կորուստ. մեր նոր սերունդը իւր կրթութիւնը կընդունի օտար, զանազան և միմեանց ներհակ աղբիւրներէ.—Ասացինք, որ մեք չուներմք մի կեդրոն մի ներդործող մարմին, որ կարողանայ այս ամէն տարաձայն, օտար և կործանիչ միտումներն ուղղել, միաւորել և հատատալ բայց՝ի Ազգային եկեղեցիէն և լեզուէն,—միևնոյն ժամանակ ակնարկեցինք թէ, օտարին շահուն ծառայող ազգադաւ մասնիչներ ազգասիրութեան պատրուակին տակ ամէն հնարք կը գործածեն—Ազգին այդ վերջին յոյսն ու յենարանն ալ կործանալու և ունայնանալու, Ազգը հիմնովին բաժանելու և տապալելու.—Ասացինք որ մեր այս օրուայ ծնողք բոլորովին երեսէ թողած են իրենց զաւակաց կրթութիւնը, նոքա կը կարծեն թէ զաւակաց անսանձ հաճոյքը կատարելովի նոցա համար անխորհրդաբար մեծագումար փող մխսելովի անսպառ կարծուած ժառանգութիւն թողլովի, իրենց պարտքը կատարած կը լինին, ուստի հանդիսաւ իրենց զուարճութեանց և ցանկութեանց կզբաղին. բայց չեն գիտեր, որ այդու զաւակին իրենց ձեռքը կը փճացնեն և նորա ապագայն կը թշուառացնեն.—Վերջապէս թէպէտ կարճ, բայց կար-

ծեմ ասացինք ինչ որ գլխաւորապես կը շփոթէ և կը խանգարէ ամէն ուղղութիւն. այժմ կը հարցնեմք.—Ա՞յս կերպով յուսալի՞ է ազգային յառաջադիմութիւն.—կամ դարձ աւելի փորձով իմ ներքին համոզումս կասէ—ոչ։

Խոստովանելով կրկնենք մեր ասածները։ Մենք վերև ասարկեցինք թէ,—նախ Ազգը պատրաստելու է, որ եկեղեցական տայ թէ եկեղեցական պատրաստելու է, որ Ազգը բարեկարգէ և կազմակերպէ։—Բայց այս հարցը այնքան փոխադարձ է, որ միակողմանի վճռել անկարելի է, քանի որ եկեղեցականութիւնը ազգին կը գոյանայ և քանի որ նորա կարելոր անդամն է։ Այսու ամենայնիւ մեր խօսքի կարգին մէջ բաւական հաստատեցինք, թէ—կրթական գործին մէջ եկեղեցականութիւնը մեծ ու ծանր պաշտօն և պարտք ունի, հասկանալի է ուրեմն, թէ—Առ այժմ արժանաւոր եկեղեցականներ պէտք են, և թէ նոցա ընտրութեան մէջ մեծ զգուշութիւն հարկաւոր է։—Արդ՝ քանի որ այս ընտրութիւնը ժողովրդեան սուրբ և անբռնաբարելի իրաւունքն է, ուրեմն բոլոր զեղծմանց ու չարեաց պատճառ և պատասխանատուն—ժողովուրդը—կը լինի, երբ զգուշաւոր և խոհական ընտրութիւն չաներ, երբ անձնասիրութեանց կը խաբուի և նոցա անցուցած կանոնին վրայ նախապէս զգուշաւոր քննութիւն չաներ. կամ թէ երբ իւր չը ճանչցած եկեղեցականը բռնադատեալ ընդունելով իւր նուիրական իրաւունքը բռնաբարուած կը տեսնէ և չը պաշտպաներ, երբ ուրիշ կողմերէ կամ իշխանութենէն իրաւացի օգտակար դիտողութիւններ կը լսէ, թոյլ չանար և կամապաշտութեամբ հակառակելով իւր սխալ ընտրութիւնը հաստատել կը պնդէ։ Այրբ—կասեմք, ժողովուրդը տէր չէ իւր իրաւանց և երկիւղածութեամբ ու ճշդիւ չը կատարեր իւր պարտքը, նա պատճառ կը դառնայ ամէն զեղծմանց։

Երբ խմբագիրք, հեղինակք և հրատարակիչքն իրենք զիրենք հասարակաց ձայնը կարծիքը, երբեմն ալ գաղափարաց ուղղութիւն տուող կը համարին, և սակայն շատ անդամ նենգաւորաց տեղ տալով, սուտ ու սխալ գաղափարներ կը տարածեն, երբ կամ շահադիտութեամբ կամ տգիտութեամբ և կամ չար ու ձախող նպատակաւ ազգավնաս և բարուց ապականիչ զեղծումներ կը սերմանեն, երբ կը պաշտպանեն կը գովեն և արժանաւոր կը ներկայացնեն եկեղեցականութեան կամ որ և է ազգային պաշտօնի այնպիսի անձնաւորութիւններ, որ իրօք անարժան են և անկարող յետոյ կը պարսաւեն և կանպատուեն, այդու նոքա կը խափանեն բարեկարգութիւնը, կը վնասեն Ազգին և պարզապէս թշնամութիւն արած կը լինին։

Երբ եկեղեցականութիւնը մոռացած իւր կոչումն ու պարտքը, կը կոչէ և կը ձեռնադրէ այնպիսիներ, որք չունին ոչ ինչ արժանաւորութիւն և պատրաստականութիւն առ այն, թէ ուխտաց փարախէն առնու զանոնք, թէ արհեստաւորի խանութէն, թէ ուսումնարանէն և համալսարանէն. երբ կոչէ զանոնք առանց ընտրութեան և քննութեան. առանց հասու լինելու նոցա վարուց և բարուց որպիսութեան, առանց կարծեացն ու գաղափարաց, կրօնական համոզմանց ու հմտութեանց և առանց պարսատարութեանցը վերայ ստոյգ ծանօթութիւն ունենալու, երբ կընդունի զանոնք այդ խիստ դգուշալի պաշտօնին մէջ առանց ամեն կերպով յարմարութիւնու անյարմարութիւնը նայելու և այնուհետև չէ կարող կամ չը կամիր ոչ բուժել ոչ ալ կարել մէկին համար իւր մէջէն անբոյժ, նեխած, փտած մահաբեր անդամները և չէ կարող կոչել նոցա տեղ առողջ ու գործունեայ անդամներ. երբ ընդհանուր ժողովրդին մէջ Աստուծոյ խօսքը լսելու սովը կը

տիրէ, ճշմարիտ ճշմարիտ կասեմ, որ ոչ բարեկարգութիւն ոչ ալ ճշմարիտ յառաջադիմութիւն կարելի է սպասել:

Երբ Հայք զբաղուած են արտաքին ու ներքին ծանր հոգսերով. ժամանակի զեղծմանց հնարած անօգուտ աւելորդ ու կենսամաշ պէտքեր հոգալով, երբ անձնատուր են զեղխութեան շուայտութեան և զգայական չափազանց զուարճութեանց, կը մեռեն ունայնութեան և կը զլանան կարեւորութեանց, մի քիչ միջոց իրենց զաւակներու կրթութեամբն զբաղելու ժամանակ չունին. երբ մարք անձնատուր են պէտքանց, կործանիչ նորասիրութեանց մոլութեանց և ցուցամոլութեան տնաւեր հաճոյից. երբ զաւակաց մնունդը, կրթութիւնը դաստիարակութիւնը իրենց փափուկ հասակէն յանձնուած է վաստակաւոր ձեռքերու և օտարի հաճոյից, այդ յուսալը սիրուն էակները, այդ քնքուշ ամեղ հոգիները մատնուած են շատ անգամ մոլի, անկիրթ, օտար սատանաներու, սպասուհիներու, ծառայներու և կեղծաւոր շահամոլ ապիկար դաստիարակներու. երբ ծնողք և եկեղեցականք, կնքահարք և ազգականք, ուսուցիչք և դաստիարակք միաբան հաճութեամբ կը դրծեն օտարաց նմանելու նոցա վաստակաւոր և կործանիչ սովորութեանց յարմարելու, ասացէք խնդրեմ,—կարելի՞ է յուսալ ազգայնութիւն և յառաջադիմութիւն.—Ասուգիս ոչ:

Երբ մեր ներկայ սերունդը, արու և էգ, կուսանին, կը կրթուին կը պատրաստուին, հակառակ ազգային պահանջմանց հակառակ իրենց կոչման և բուն կենսական պէտքերի պահանջմանց. երբ բուն իսկ ուսանողական զգուշալի և արդիւնաբեր շրջանին մէջ կուսանին ամեն մոլութիւն և մոլորութիւն, դուրս կը գան կամապաշտ, շաղակրատ, ատելոյ արուեստից և աշխատանաց, երբ օրէցօր դաստիարակաշրջիկ, մխող խաբեբայներ, եկեղեցական

և աշխարհական, կը շատնան, ինչպէս կարելի է յուսալ բարկարգութիւն և յառաջադիմութիւն։

Երբ Մայրեր չունենք և Աղջիկները չեն պատրաստուիր Մայրութեան. երբ ունայնասիրութիւնը, ցուցամոլութիւնը, քմահաճութիւնը, ուսումն և կրթութիւն կը համարուին շատ տեղեր. երբ նոքա թռուցիկ հնչեն զաղափարներով կը սնանին. երբ պճնասիրութեամբ և ձեւաւոր երեւելու սին ու անօթաղի խորհրդով սեղմիչ մեքենայներու մէջ կը կաշկանդուին, անդական ու ծննդական գործարաններին կը խանգարին, երբ շպարով թիւնաւոր ներկերով ու փոշիներով մարմինին ու արիւնին կ'ապականին ու վատառողջ զաւակներ կրան Աղջին, շատերն ալ որդեծնութիւնին իսկ կը կորսնցնին. երբ հեշտասէր մայրեր, թոռած իրենց ոգւոց կրթութեան հաճոյական ու մխիթարական գործը, անտեսութիւնը ամուսնասիրութիւնը և որդասիրութիւնը. երբ զաւակ ծնանիլն ու սնուցանելը, որ Աստուծոյ փառքն ու պատիւը և միակ օրինաւոր պարծանքն է, կարհամարհեն և ծանր բեռն կը համարին. երբ Այր ու կին շեղուած մարդկային կոչումէն, արարչութեան նպատակէն, կը դիմեն սիրով անպտղութեան և կորստեան դիրքը, իրենք կը տուժին այդու իւրանց ճշմարիտ ուրախութիւնն ու միխիթարութիւնը, Աղգն ու մարդկութիւնն ալ կը կորսնցնեն իրենց օգտակար անդամները և կը խափանուի Արարչութեան խորհուրդն ու նպատակը։—Այս կերպով Աղգ չը կանգնիր, այլ կանգուն աղգ մի կործանելու համար տակէ տակի ունելի դիւրին հնարք չըկայ։ Ինչպէս որ մի ժառանգ, զէշ կրթութիւն առնելով կարող է ընդունայն մխոցութեամբ իւր Հօրն անարգ ծոխութիւնը փճացնել, հաստատուած հայրենի տունը կործանել, ինքն աղքատութեան և հիւանդութեան մատնուելով տարաժամ մեռնել, այսպէս կը

լինի և Ազգ մի, երբ ուղիղ կրթութիւն չստանալով կը մնայ կը փճացնէ իւր գոյութեան տարրը։

Երբ կրթութեան գործը կը յանձնուի անձնանձնաս, շահամոլ և մտապարծ պաշտօնեաներու, անժուժկալ կրից անձնատուր և բարոյական օրինաց անտեղեակ մարդկան. երբ հանդոյզը կը լինի անխորհ վարժապետ, դաստիարակ, տեսուչ, տնօրէն, քահանայ և վարդապետ.—անկարելի է յառաջադիմութիւն սպասել։

Բանի որ մեք, մեր իշխանները, գործիչները, պաշտօնեայները—եկեղեցական կամ աշխարհական կը տարեմք այլոց ազգեցութեամբ, ոչ թէ նոյն պաշտօնին յարմարութիւն ունենալուն համար, այլ՝ այս կամ այն գործին մէջ յաջողակ լինելուն համար, կը կարծեմք թէ ամէն գործի մէջ ալ յաջողակ կը լինի. չեմք գիտեր յատկութիւն ճանչնալ և ըստ այնմ գործածելով օգտուիլ. յետոյ կը վերասեմք թէ մեզ, թէ նոյն անձին և թէ բուն իսկ պաշտօնին։ Մեք կընտրեմք մի իշխան կամ պաշտօնեայ, ոչ այն նպատակաւ, որ Ազգին ծառայէ, այլ որպէս զի մեր գլխէն հեռանայ, որպէս զի նորա փառասէր ցանկութիւնները գոհացնեմք, որպէս զի այլոց հաճոյանամք, որպէս զի մասնաւոր շահերը կարմնենք—հոգ չէ որ ընդհանուրը վնասուի.—մեք կընտրեմք վերջապէս մեր պաշտօնեայքը կամ ծերութեանը համար և կամ նոցա նիւթական շահուն և ապահովութեան համար։ Իսկ յետ ընտրութեան աչքերնիս ոչ թէ հարս, այլ քառասուն կը բանամք, կրսկսիմք ամենամանր պակասութիւնները խոշոր տեսնել, ոչ միայն ներկայն, այլ և անցեալ կեանքը նոր կ'սկսեմք քննել միայն փոտ կողմերին, կը մոռանամք օգտակար ծառայութիւնները, ապագայ ջարիքներն ալ կը գուշակեմք, կանպատուեմք և կը հեռացնեմք պաշտօնէն ամենայն խայտառակութեամբ. կը կոր-

ծանեմք իշխանն ալ իշխանութիւն ալ, չեմք տեսներ ու խնայեր ազգութեան պատիւը, և յաղթանակը տարած կը հանարիմք, մինչդեռ իրաք յաղթուած կը լինիմք, զի կը կորսնցնեմք ամեն բան։

Եթէ դիպուածով բաղդաւոր գտնուիմք և մի խոհեմ գործունեայ ազգասէր իշխանի ընտրութեան արժանանք, սակայն զայն ալ կը շփոթենք. ամեն մարդ կ'սկսի խնդրին փչած առաջարկութիւններն անել, ուղղութիւններ տալ. նոքա արդէն կազմած ուղղութիւնները խանգարել շփոթել. իշխանին վերայ պատգամներ և հրամաններ կը տեղան, հրահանգներ և խորհուրդներ կրան միմեանց հակառակ։ Եթէ ոմանց ասածը չը կատարէ, նոքա կը թշնամանան, գաղտի կամ յայտնի կը վատաբանեն, որոգայթ կը լարեն, մինչև կործանեն. եթէ ոմանց ասածը կատարէ և օգտակար լինի, նոքա կ'սկսին պարծենալ ատ և անդ, իրենք զերենք ուշեմ, իսկ իշխանը անմիտ կը հռչակեն, մինչև անգամ անանձնութեանմբ կը հրատարակեն ալ, թէ—Այդ խորհուրդը ես տուի, այդ գաղափարը ես յայտնեցի, ես առաջարկեցի՝ այսպէս ու այնպէս ասացի, և այլն.—ազգայա՞ն մտապարծութիւն։ Երբեմն առանձնախօսութիւնները հրապարակ կը հանեն, երբեմն ալ բնաւ չը խօսուած ու չեղած բաները իբր խօսուած ու եղած կը հրատարակեն. իսկ երբ գործը վատ հետևանք ունենայ, այն ատեն բոլոր յանցանքը գործադրողին վրայ կը ծանրացնեն և այսպէս ամեն բան կը մատնեն խառնակութեան, խափան կը լինեն գործոց ընթացքին և կը վհատեցնեն գործողը. Ազգին բարիքը կը կորսնցնեն, իրենց ձեռօք Ազգայնութեան հիմունքը կը փորեն. շնեալու տեղ կը քանդեն և յիմարաբար օտարներին օգնութիւն կը յուսան. առանց խորհելու, որ օտարին օգնութիւնը իրենց վնասն ու

կորուստն է, մանաւանդ երբ մեք մեղ վնասակար ենք, ուրիշներէն ի՞նչ օգուտ կրնանք յուսալ։

Վերջին խօսք.—Երբ որ մեք կընտրենք մեր եկեղեցականները յարմարութիւնքաջ գիտնալով, խոհեմութեամբ և ըստ օրինաց եկեղեցւոյ, երբ եկեղեցականք կը վարեն իրենց պաշտօնը խղճի մտաք ըստ Աստուծոյ. իսկ հակառակ դէպքի մէջ օրինաւորապես կը մերժուին ձեռնհաս իշխանութեան կողմէն և ոչ թէ գռեհկաբար։

—Երբ մեք կընտրենք, եկեղեցական թէ աշխարհական իշխանները խորհրդով, զգուշութեամբ և շնչահայեցութեամբ, նոյնպէս և բոլոր ազգային պաշտօնեայներն ու գործիչները, լաւին ու վատին մէջ տարբերութիւն կը դնենք, նոցա հետ պարտ ու պատշաճ յարգանաք կը վարուիմք, բարձր ու արժանաւոր դիրքի մէջ կը պահենք. և երբ պաշտօնակալք և գործողք չեն զեղծանիր իրենց իշխանութեամբ, այլ ողջմտութեամբ անխոտան կը կատարեն իրենց պարտականութիւնքը անաչառ արդարութեամբ կը բաշխեն վարձք և պատիժ։

—Երբ ուսումնարանները առ հասարակ ազգային ուղղութիւն կըստանան և կրթութիւնը ուղիղ բարոյականութեան վերայ կը հիմնուի, ուսումը ազգային շահերուն կը յարմարցուի և դրութիւնները կը միանան։

—Երբ ճշմարիտ Հայրեր ու Մայրեր կը պատրաստուին և ոչ թէ դուսաններ։

—Երբ արհեստը ճարտարութիւնը և ճշմարիտ գիտութիւնը միայն կը սիրուի ու քաջալերութիւն ստանալով բաղմաթիւ հետևողներ կունենայ։

—Երբ եկեղեցական և աշխարհական ձեռք ձեռքի տուած միաբան միակամ, սիրով և յոժարութեամբ Ազգին

ճշմարիտ օգտին կաշխատին, կը ծառայեն Ազգին շահուն. երբ ամեն մարդ սուրբ մտաք կը կատարէ իւր պարտքը, այն ատեն, և միայն այն ատեն կը հաւատամ, որ Ազգայնութիւնը կը կազմակերպի և Ազգը կը յառաջադիմէ ամենայն բարեկարգութեամբ։—Այս է իմ հաւատք և ներքին համոզումը։

ՎԱՐԴԳԵՍ.

1882 Սեպ. 1.
Ի Ս. Թէթրպուրգ։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՔԻ
ՏՈՒՆ ՀԱՍԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ.